

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի
քաղաքականություն II

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
(ՇԿՆՊ)

Հունիս, 2020թ.

Contents

Հապավումների ցանկ.....	3
1. Ներածություն.....	5
<i>Ակնարկ երկրի մասին.....</i>	<i>5</i>
<i>Հանքարդյունաբերության ոլորտի պետական քաղաքականություն.....</i>	<i>6</i>
<i>ՇԿՆՊ նպատակը.....</i>	<i>8</i>
2. Ծրագրի նկարագրությունը.....	9
<i>Գործողություններ/ բաղադրիչներ.....</i>	<i>9</i>
<i>Իրականացնող մարմին.....</i>	<i>11</i>
<i>Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության I դրամաշնորհի շրջանակներում իրականացված սկզբնական ներգրավման գործողությունները.....</i>	<i>11</i>
3. Շահագրգիռ կողմերի նույնականացում և վերլուծություն.....	15
<i>Հիմնական սահմանումները.....</i>	<i>15</i>
<i>Ծրագրի շահագրգիռ կողմերը.....</i>	<i>18</i>
4. Մեթոդաբանություն.....	27
<i>Հիմնական սկզբունքները.....</i>	<i>27</i>
<i>Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների ամփոփում.....</i>	<i>28</i>
<i>Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան.....</i>	<i>30</i>
<i>Տեղեկատվության բացահայտման առաջարկվող ռազմավարությունը.....</i>	<i>35</i>
5. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ.....	35
<i>ԲԱՄ-ի ներածություն.....</i>	<i>37</i>
<i>ԲԱՄ տեղեկատվության հաղորդում Ծրագրի շահագրգիռ կողմերին.....</i>	<i>38</i>
<i>Բողոքների արձագանքում.....</i>	<i>39</i>
6. ՇԿՆՊ-ի մոնիտորինգ և հաշվետվողականություն.....	41
7. ՇԿՆՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	42
<i>Ղեկավարության գործառույթները և պատասխանատվությունները.....</i>	<i>42</i>
<i>Ռեսուրսներ.....</i>	<i>43</i>
8. ՇԿՆՊ իրականացման ՌԻՍԿԵՐԸ.....	44
<i>Ընդհանուր ռիսկերը.....</i>	<i>44</i>
<i>COVID-19 նկատառումները.....</i>	<i>45</i>

Հապավումների ցանկ

ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԱՃԳԾԱ	Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցություն
ԱՃԳԽ ԲԴՀՀ	Արդյունահանող ճյուղերի գործառնությունների խորհրդատվության բազմադոնորային հավատարմագրային հիմնադրամ
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկլուս խմբերի քննարկումներ
ԲՄՀ	Բողոքների ստացման համակարգող
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ԲԱՍ	Բողոքների արձագանքման մեխանիզմ
ԲԱԾ	Բողոքների արձագանքման ծառայություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
ՀՕԲ	Հաստատությունների օժանդակության բաժին
ՏՏԵԶ	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում
ԱԻՆ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԷՆ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ԲՆ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
ԱՆ	ՀՀ առողջապահության նախարարություն
ԲՇԽ	Բազմաշահառու խումբ
ՀԿ	Հասարակական կազմակերպություններ
ՇԿՆ	Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան

ՄՆՏՁ

Սոցիալական ներդրումներ և տեղական զարգացում

ՀԲ

Համաշխարհային բանկ

ԶՊՄԿ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

1. Ներածություն

Ակնարկերկրի մասին

Հանքարդյունաբերությունը Հայաստանում արդյունաբերության և արտահանման մեջ խոշորագույն ավանդ ունեցող ոլորտներից մեկն է: Երկիրը հարուստ է հանքանյութերով՝ պղինձ, ոսկի, արծաթ, ցինկ, ինչպես նաև արդյունաբերական նշանակության օգտակար հանածոներով, օրինակ՝ դիատոմիտ, գիպս, կրաքար, պեռլիտ և ռենիումի աղ: Տեղական մակարդակով հանքարդյունահանող ընկերություններն ապահովում են զգալի թվով աշխատատեղեր, քանի որ դրանք առաջարկում են աշխատանք պայմանագրային հիմունքներով գյուղերում և փոքր քաղաքներում, ուր նման աշխատատեղերը հազվադեպ են:

Հանքարդյունաբերությունը, չնայած հանդիսանում է աճի պոտենցիալ շարժիչ ուժ, նաև վիճելի թեմա է Հայաստանում: Բնակչության մի մասի, մասնավորապես քաղաքացիական հասարակության մոտ, կա զգալի անվստահություն հանքարդյունաբերության նկատմամբ: Այս անվստահությանը մեծապես նպաստում է տեղեկատվության և երկխոսության բացակայությունը շահագրգիռ կողմերի միջև, ինչպես նաև այն հանգամանքը, որ մետաղական հանածոների հանքավայրերի մեծ մասը ստեղծվել են խորհրդային ժամանակաշրջանում՝ բնապահպանական և սոցիալական ոչ խիստ ստանդարտների պայմաններում:

Վստահության պակասին անդրադառնալու և ներդրումային մթնոլորտը բարելավելու համար, Հայաստանի Հանրապետությունը 2017թ.-ին միացավ «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը» (ԱՃԹՆ) ՀՀ կառավարության նախաձեռնությամբ: Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը աջակցել են մի շարք գործընկեր միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ Համաշխարհային բանկը:

«Բազմաշահառու խումբ» (ԲՇԽ) ստեղծելուց հետո, որը հանդիսանում էր ԱՃԹՆ-ն ներդնելու կառավարության հայտի ներկայացման նախապայման և որի կազմում մտան ներկայացուցիչներ կառավարությունից, քաղաքացիական հասարակությունից և հանքարդյունահանող ընկերություններից, երկխոսությունը հիմնական շահագրգիռ կողմերի միջև զգալիորեն ակտիվացավ: ԱՃԹՆ հաշվետվությունների և դրա կայքի միջոցով¹ հանրությանը հասանելի դարձավ զգալի ծավալի տեղեկատվություն ոլորտի մասին: Սակայն առաջընթացը ոլորտի կայուն զարգացման ուղղությամբ դեռ մեծ չէ:

2015-2016թթ. Համաշխարհային բանկը՝ Արդյունահանող ճյուղերի գործառնությունների խորհրդատվական գրասենյակ - բազմադոնորային հավատարմագրային հիմնադրամի շրջանակներում աջակցեց

¹ Լինկը՝ <https://www.eiti.am/en/>

«Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» ձեռնարկմանը²: Այն ցույց տվեց, որ չնայած հանքարդյունաբերությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի տնտեսության համար, առանձին գործառնությունները, ընդհանուր առմամբ, բավարար չափով չեն նպաստում երկրի երկարաժամկետ կայուն զարգացմանը, չնայած նրան, որ ոլորտի կանոնակարգողներն անցյալում և ներկայումս իրականացնում են նախաձեռնություններ ոլորտը բարեփոխելու ուղղությամբ: Հետևաբար, Հայաստանին խորհուրդ է տրվում մշակել հստակ տեսլական և երկարաժամկետ ռազմավարություն՝ որոշելու, թե ինչպիսին պետք է լինի իր հանքարդյունաբերական ոլորտի զարգացումը, այսինքն՝ մշակել «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն»:

2018թ. թավշյա հեղափոխությունից և դրան հաջորդած խորհրդարանական ընտրություններից հետո, նոր կառավարությունը հայտարարեց, որ մտադիր է հետևողական կերպով նպաստել ոլորտի կայուն զարգացմանը: Համաձայն Կառավարության ծրագրի բնապահպանական, սոցիալական և տնտեսական տեսանկյունից կենսունակ հանքարդյունաբերության ոլորտ ստեղծելու կարիք կա, և այդ նպատակով անհրաժեշտ է մշակել հանքային ոլորտի քաղաքականություն: Բոլոր հիմնական շահագրգիռ կողմերը համաձայնվեցին, որ հանքարդյունաբերության հետագա զարգացումը պետք է ուղեկցվի ոլորտի ապագայի մասին ինտենսիվ, կառուցողական և թափանցիկ երկխոսությամբ, որին կմասնակցեն կառավարությունը, մասնավոր ոլորտը, քաղաքացիական հասարակությունը և ազդակիր համայնքները:

Հանքարդյունաբերության ոլորտի պետական քաղաքականություն

Հանքարդյունաբերության պետական քաղաքականության մշակումը՝ մեծ թվով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ իրականացվող գործընթացի միջոցով, կօգնի ստեղծել հանքարդյունաբերության ոլորտի կառավարման համապատասխան քաղաքականության շրջանակ Հայաստանում, միևնույն ժամանակ ապահովելով ոլորտի զարգացումն ամենաբարձր սոցիալական և բնապահպանական ստանդարտներին համապատասխան: Հաշվի առնելով, որ վաղ զարգացման փուլում են մի քանի հանքարդյունաբերական ծրագրեր, և իրականացվում են մոտ 50 ուսումնասիրություններ, ներկայումս շատ լավ ժամանակ է ոլորտի երկարաժամկետ տեսլականը մշակելու համար:

²<http://documents.worldbank.org/curated/en/289051468186845846/Armenia-Strategic-mineral-sectorsustainability-assessment>

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը կօգնի Հայաստանին որոշելու ոլորտի ապագան և անհրաժեշտ քայլերը, որոնք կնպաստեն, որ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտը՝ ա) լինի առողջ ներդրումային միջավայր առաջավոր ընկերությունների համար, բ) գործի բնապահպանորեն և սոցիալապես պատասխանատու կերպով, գ) կառավարի բնական պաշարները և կիսի պատասխանատվությունը ապագա սերունդների հանդեպ և դ) հիմնված լինի տեղական բիզնեսի հետ սերտ համագործակցության վրա:

Ոլորտի արդյունավետ քաղաքականությունը կսահմանի ոլորտային լայնածավալ բարեփոխումներ: Քաղաքականությունը կներառի օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների գործողությունների պլան, որը կուղեկցի և կառաջնորդի քաղաքականության իրականացումը: Բարեփոխումների վրա հիմնված քաղաքականությունը թույլ կտա կառավարությանն ունենալ կայուն զարգացող հանքարդյունաբերական ոլորտ Հայաստանում:

Համաշխարհային բանկը՝ Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցության հավատարմագրային հիմնադրամի (ԱՃԳԾԱ ՀՀ) միջոցով, ֆինանսավորում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն II» ներկայիս դրամաշնորհի ներքո (այսուհետ՝ «Ծրագիր»): Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի տարածքային կառավարման հիմնադրամի (ՀՏԿՀ) կողմից: ՀՏԿՀ-ն կիրականացնի Ծրագրի իրագործմանն առնչվող ֆինանսական վերահսկողության ու կառավարման բոլոր գործողությունները: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակման և ընդունման համար պատասխանատու ՀՀ կառավարության մարմինն է: Այլ նախարարությունները՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ), ՀՀ առողջապահության նախարարությունը (ԱՆ), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (ԱԻՆ), ինչպես նաև այլ պետական հիմնարկներ և ոչ կառավարական շահագրգիռ կողմեր ակտիվորեն կմասնակցեն Քաղաքականության և առնչվող օրենսդրական բարեփոխումների քննարկումներին:

Սույն դրամաշնորհի առաջարկվող մշակման նպատակն է՝ աջակցել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և առնչվող գործողությունների պլանի մշակմանը, որը կկենտրոնանա կայուն տնտեսական զարգացման գործում հանքարդյունաբերության ոլորտի ավանդի ամրապնդման վրա:

Հիմնական արդյունքներն են՝

- ՀՀ կառավարության կողմից Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և առնչվող գործողությունների պլանի հաստատումը,
- ՀՀ «Ընդերքի մասին օրենսգրքում» և առնչվող իրավական ակտերում կատարված 5-7 փոփոխություններ՝ ուղղված հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և սոցիալական հարցերի կարգավորմանը՝ Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությանը համահունչ,
- ՀՀ կառավարության հանքարդյունաբերության ոլորտի հիմնարկների աշխատակազմի 30 տոկոսի (առնվազն 30 տոկոս կանանց մասնակցությամբ) ժամանակակից հանքարդյունաբերության ոլորտի կառավարման ստանդարտների և փորձի վերաբերյալ վերապատրաստումը՝ նոր Քաղաքականությանը համաձայն:

Հրապարակայնորեն հասանելի «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունն» առանձին հանդիսանում է որպես կանոնակարգող օգտակար գործիք, որը կատարում է հետևյալ երկու կարևոր գործառույթները՝

- այն հստակ սահմանում է կառավարության ակնկալիքներն ու մտադրությունները հանքարդյունաբերության ոլորտի առնչությամբ
- այն ուղեցույց է հանդիսանում օրենսդրություն մշակողների, կանոնակարգողների և այլ շահագրգիռ կողմերի համար և օժանդակում գործողությունների համակարգմանը տարբեր մարմինների միջև:

ՇԿՆՊ նպատակը

Սույն «Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի» (ՇԿՆՊ) նպատակն է՝ ամրագրել Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության առանցքային շահագրգիռ կողմերին, համապատասխան գործողությունների պլանը, սահմանել շահագրգիռ կողմերի ներգրավման մեթոդները, հաստատել կառուցողական երկխոսություն կողմերի միջև և ներկայացնել շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների իրականացման գործում կողմերի պարտականությունները: ՇԿՆՊ-ի նպատակն է ապահովել շահագրգիռ կողմերի լայն և ակտիվ մասնակցությունը և ժամանակին ստեղծել կառուցողական երկխոսության մթնոլորտ հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի և գործողությունների պլանի մշակման նպատակով:

Կոնկրետ, ՇԿՆՊ-ն ծառայում է հետևյալ նպատակներին՝

- I. իրականացնել շահագրգիռ կողմերի նույնականացում և վերլուծություն.

- II. պլանավորել ընդգրկուն ներգրավման եղանակներ և հաղորդակցության արդյունավետ գործիքներ, որոնք հնարավորություն կտան հաշվի առնել շահագրգիռ կողմերի տեսակետները.
- III. ապահովել Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների մասին տեղեկատվության պատշաճ և ժամանակին բացահայտումը շահագրգիռ կողմերին՝ հասանելի և համապատասխան ձևաչափով.
- IV. սահմանել տարբեր կողմերի դերն ու պարտականությունները ՇԿՆՊ իրականացման ընթացքում.
- V. որոշել Բողոքների արձագանքման մեխանիզմը (ԲԱՄ), և
- VI. հետադարձ կապ հաստատել շահագրգիռ կողմերի հետ.
- VII. ՇԿՆՊ մոնիթորինգ և հաշվետվողականություն:

Սույն «Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը» կհանրայնացվի և բաց կլինի հետադարձ կապի ու քննարկման համար: Շահագրգիռ կողմերից ստացված արձագանքը կներառվի ՇԿՆՊ վերջնական տարբերակում:

2. Ծրագրի նկարագրությունը

Գործողություններ/բաղադրիչներ

Ծրագիրն ապահովում է «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության» մշակումը, որը կհանդիսանա ՀՀ կառավարության գործողությունների հիմքը տվյալ ոլորտում: Ծրագրի գործողությունները կենտրոնացած կլինեն՝ ա) «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության» վերջնական փաստաթղթի մշակման վրա, այդ թվում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների անցկացման, Քաղաքականության փաստաթղթում այդ խորհրդակցությունների արդյունքների ներառման վրա, բ) իրավական վերլուծության վրա՝ ապահովելու ներկա օրենսդրության համապատասխանեցումը Քաղաքականությունում ամրագրված առաջնահերթություններին և նպատակներին, գ) համապատասխան նախարարությունների աշխատակազմի կարողությունների զարգացման գործընթացների վրա և դ) տեղական համայնքներում, հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների և քաղաքացիական ծառայողների շրջանում տեղեկատվության տարածման և քաղաքականության ու գործողությունների պլանի քննարկման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

Բաղադրիչ 1. Քաղաքականության մշակում, իրագեկում և խորհրդակցություններ: Քաղաքականությունը հիմնված կլինի լավագույն միջազգային փորձի, գրականության վերլուծության, Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության I դրամաշնորհի ուսումնասիրությունների, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքների վրա: Այս քաղաքականությունը հստակ ուղեցույց կդառնա հիմնավոր, կայուն և իրագործելի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման համար: Քաղաքականությունը կսահմանի հանքարդյունաբերության ոլորտի նպատակները՝ շարադրելով համապատասխան ուղղորդող սկզբունքներն իրավական, պայմանագրային, ինստիտուցիոնալ, բյուջետային, բնապահպանական և սոցիալ-տնտեսական տիրույթներում:

Քաղաքականության քննարկումները պետք է հիմնված լինեն **բազմաշահառու խմբի մասնակցությամբ** երկխոսության և կառավարության ներկայացուցիչների, հանքարդյունահանող ընկերությունների, ՔՀԿ-ների, ազդակիր համայնքների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ **խորհրդակցությունների** վրա՝ շեշտը դնելով կանանց և խոցելի խմբերի մասնակցության վրա: Այս խորհրդակցությունների նպատակն է՝ մշակել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի միասնական տեսլականը, որը կգտնի իր տեղը քաղաքականությունում: ԱՃԹՆ ԲՇԽ-ն ակտիվ մասնակցություն կունենա այս գործընթացում:

Քաղաքականության հիման վրա կմշակվի «Գործողությունների պլան»:
Գործողությունների պլանը կլինի քաղաքականության մաս և այն կառաջնորդի դեպի բարեփոխումներ: Պլանը կսահմանի ժամանակացույց՝ առնչվող առաջնահերթություններով և պարտականություններով հանդերձ:

Բաղադրիչ 2. Քաղաքականության իրականացումը և իրավական ակնարկ:
Քաղաքականության և Գործողությունների պլանի հիման վրա, որը կորոշի բարեփոխումների առանցքային ոլորտները, կիրականացվի իրավական վերլուծություն՝ ապահովելու նոր ընդունված հանքարդյունաբերության քաղաքականության համապատասխանությունը ներկակա օրենսդրությանը: Հայաստանի կառավարությունը կորոշի օրենսդրական բարեփոխումների առաջնահերթությունը և կիրականացնի իրավական ակտերի մշակման, քննարկման և ընդունման գործընթացը:

Բաղադրիչ 3. Իրագեկման բարձրացում և կարողությունների զարգացում:
Իրագեկման բարձրացման և կարողությունների զարգացման գործողությունները վճռորոշ նշանակություն կունենան Ծրագրի արդյունավետ իրականացման համար: Ոլորտային նախարարությունների, մասնավորապես՝ ՏԿԵՆ-ի, ՇՄՆ-ի, ԱՍՀՆ-ի,

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և այլ առանցքային շահագրգիռ կողմերի համար կազմակերպված դասընթացները և սեմինարները ոլորտի բնապահպանական և սոցիալական թեմաներով կապահովեն քաղաքականության արդյունավետ մշակումը և իրականացումը: Իրազեկման բարձրացման միջոցառումները կօգնեն տարածել Քաղաքականության առաջնահերթություններն առանցքային շահագրգիռ կողմերի միջև, այդ թվում պետական մարմինների, ՔՀԿ-ների, բիզնես հաստիքային ազդակիր համայնքների շրջանում:

Իրականացնող մարմին

Ծրագիրը կիրականացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներքո գործող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՁ) կողմից: Նախարարությունը պատասխանատու կլինի ծրագրերի բովանդակային մասի իրականացման, իսկ ՀՏՁ-ն՝ ֆինանսավար գործառնությունների համար: Երկուսն էլ մեծ փորձ ունեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների, այդ թվում Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման գործում: ՀՏՁ-ն հաջողությամբ իրականացրել է Համաշխարհային բանկի մի քանի ծրագրեր և ներկայումս իրականացնում է Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (ՄՆՏՁ) ծրագիրը, ինչպես նաև Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման (ՏՏԵՁ) ծրագիրը: Հիմնադրամը ծանոթ է Համաշխարհային բանկի գնումների և ֆինանսների կառավարման պահանջներին և ունի այս ծրագիրն իրականացնելու կարողություն:

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության I դրամաշնորհի շրջանակներում իրականացված սկզբնական ներգրավման գործողությունները

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության I դրամաշնորհը իրականացվել է 2017 օգոստոսից 2018 սեպտեմբեր: Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը սկսելու համար ՀՀ կառավարությունը 2016թ. ձևավորեց աշխատանքային խումբ, որի մեջ ներգրավվեցին ներկայացուցիչներ տարբեր պետական հաստատություններից: Խումբը մշակեց Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության հայեցակարգային փաստաթուղթը: Այս հայեցակարգային փաստաթուղթն ընդգծում է հանքարդյունաբերության ոլորտի զարգացման մեջ տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական հաստատությունների, ոլորտային նախարարությունների, քաղաքացիական հասարակության, հանքարդյունահանող ընկերությունների, պոտենցիալ ներդրողների, ազդակիր համայնքների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ կողմերի ներգրավման կարևորությունը: Ընդունված

փաստաթուղթը սահմանում է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակման կարևորությունը, ինչպես նաև տալիս մանրամասն գնահատականներ հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար առաջարկություններ ձևակերպելու վերաբերյալ: Կառավարությունը ստացավ 450,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ ԱՃԳԾԱ հավատարմագրային հիմնադրամից: Ցավոք, նախկին դրամաշնորհի ժամանակահատվածում հնարավոր չեղավ մշակել ոլորտի ամբողջական քաղաքականություն մի շարք պատճառներով, այդ թվում՝ 2018թ. երկրում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների պատճառով:

Շվեդական «Swedish Geological AB» ընկերությունը 2016թ. հրապարակեց Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատումը, որն ընդունվեց Համաշխարհային բանկի կողմից: Փաստաթղթի նպատակն էր աջակցել ՀՀ կառավարությանը՝ ստանալու ավելի լավ պատկերացում հանքարդյունաբերության ոլորտի հիմնական սոցիալական և բնապահպանական մարտահրավերների և ապագա հնարավորությունների մասին: Նախնական խորհրդակցական հանդիպումներ տեղի ունեցան Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) ներկայացուցիչների և ՀՀ վարչապետի գրասենյակի ներկայացուցիչների հետ՝ որոշելու ապագա գնահատման հիմնական թեմաները: Ընդհանուր առմամբ, նույնականացվեցին և քննարկվեցին հանքարդյունաբերության ոլորտի հետ առնչվող գնահատման յոթ տարբեր ուղղություններ, այդ թվում երեք առաջնահերթ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններ՝ տնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և առողջապահություն: Դրանց հիման վրա, որպես քաղաքականության նախադրյալ, նախաձեռնվեց երկու ուսումնասիրություն՝ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա զեկույցը (իրականացվեց «EV Consulting-GTK» ընկերության կողմից) և Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման զեկույցը (իրականացվեց «DMT-GTK» ընկերության կողմից): Ստեղծվեցին երկու աշխատանքային խմբեր, որոնց կազմում էին մի շարք ոլորտային նախարարությունների, այդ թվում՝ ՏԿԵՆ, ՇՄՆ, Առողջապահության նախարարության (ԱՆ) և ՀՀ վարչապետի գրասենյակի ներկայացուցիչներ:

Այս խմբերը դիտարկեցին և քննարկեցին գնահատման ուսումնասիրությունների տեխնիկական առաջադրանքները (SU-ներ) և հաշվետվությունների նախագծերը: Անցկացվեցին մոտ 3-4 խորհրդատվական հանդիպումներ յուրաքանչյուր խմբի կողմից SU-ը վերջնական հաստատելու համար: Կազմվեցին խորհրդատվական հանդիպումների արձանագրություններ: Գնահատման ուսումնասիրությունների SU-

ները և հաշվետվության նախագծերն առանձին դիտարկման ներկայացվեցին և քննարկվեցն ԱՃԹՆ ԲՇԽ կողմից: ԱՃԹՆ ԲՇԽ-ի կազմում ներգրավված են ներկայացուցիչներ հետևյալ քաղաքացիական հասարակության կազմակերպություններից՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ից, «Հասարակական ձայն» ՀԿ-ից, «Իրավաբանների Հայկական Ասոցիացիա» ՀԿ-ից, «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ-ից, «Հայաստանի անտառներ» ՀԿ-ից, իսկ գիտական հաստատություններից՝ Երևանի պետական համալսարանը՝ Ռեզիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնը:

Գնահատման ուսումնասիրությունների ժամանակ խորհրդատվական ընկերությունները քննարկումներ անցկացրեցին հանքարդյունաբերության ոլորտում ակտիվ ՔՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև հանքարդյունահանող ընկերությունների հետ: Հաշվետվությունները դիտարկվեցին, քննարկվեցին և լրամշակվեցին կառավարության աշխատանքային խմբերի և ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

Բոլոր փաստաթղթերը, օրինակ՝ գնահատման հաշվետվությունների ՏԱ-ները, գնահատման հաշվետվությունների նախագծերը և այլն, քննարկվեցին և առնվազն 3 անգամ շրջանառվեցին շահագրգիռ կողմերի միջև որպես առաջին նախագիծ, վերջական նախագիծ և վերջնական փաստաթուղթ՝ շահագրգիռ կողմերի համագործակցության և վերջնական մեկնաբանությունները ստանալու համար՝ փաստաթղթերի հետագա բարելավման նպատակով: Բացի այդ, գնահատման հաշվետվությունները շրջանառվեցին առանցքային շահագրգիռ կողմերի միջև ԱՃԹՆ-ի էլ. փոստի ցուցակի միջոցով, որում ներառված են ավելի քան 100 ներկայացուցիչներ ոլորտի ՔՀԿ-ներից, ինչպես նաև հանքարդյունահանող ընկերություններից: Գնահատման հաշվետվությունները թարմացվեցին և բարելավվեցին ստացված արձագանքների հիման վրա: Բացի այդ, ՔՀԿ-ների ներկայացուցիչները նախաձեռնեցին և իրականացրեցին հաշվետվությունների ոչ պաշտոնական քննարկումներ:

Աղյուսակ 1. Առաջին դրամաշնորհի շրջանակներում իրականացված՝ շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները

Գործողություն	Ներգրավված շահագրգիռ կողմ	Ժամ, վայր, խորհրդատվության թեման
Նախնական խորհրդատվական քննարկումներ	Շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ), Էկոնոմիկայի նախարարություն (ԷՆ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների	2017թ. հունիս-օգոստոս, Երևան Հետագա գնահատումների թեմայի որոշում

	նախարարություն (ՏԿԵՆ), Վարչապետի գրասենյակ	
Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա զեկույցի SU-ի քննարկում	Նախկին Էներգետիկայի ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (ներկայիս ՏԿԵՆ), Էկոնոմիկայի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Վարչապետի գրասենյակ	2017թ. հոկտեմբեր-դեկտեմբեր, Երևան Տնտեսական գնահատման SU բովանդակության քննարկում
Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման զեկույցի SU-ի քննարկում	Առողջապահության նախարարություն, նախկին Էներգետիկայի ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (ներկայիս ՏԿԵՆ), Շրջակա միջավայրի նախարարություն, Վարչապետի խորհուրդ	2017թ. հոկտեմբեր-դեկտեմբեր, Երևան Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման զեկույցի SU բովանդակության քննարկում
Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա զեկույցի SU-ի քննարկում	ԱՃԹՆ ԲՇԽ, այդ թվում ՔՀԿ-ներ, «Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, Երևանի պետական համալսարան՝ Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոն, «Հասարակական ձայն» ՀԿ և այլն:	2018թ. հունվար-փետրվար, Երևան Գնահատման SU-ի բովանդակության քննարկում
Խորհրդատվական ընկերությունների կողմից գնահատման հաշվետվությունների մշակում, քննարկում քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	ՔՀԿ-ներ, հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչներ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն	2019թ. մարտ – 2020թ. հունվար Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա զեկույց

<p>րի, ուսումնասիրվող արդյունաբերության ներկայացուցիչների հետ</p>		<p>2019թ. հուլիս – 2020թ. մարտ Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման զեկույց</p> <p>Ստանալ մանրամասն պատկերացում մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ներկայիս պրակտիկայի մասին</p>
<p>Մշակված գնահատման հաշվետվությունների քննարկում և վերանայում</p>	<p>Նախկին Էներգետիկայի ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն (ներկայիս ՏԿԵՆ), Էկոնոմիկայի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Վարչապետի գրասենյակ, ԱՃԹՆ ԲՇԽ, այդ թվում ՔՀԿ-ներ, «Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, «Էկոլուր» ՀԿ, Երևանի պետական համալսարան՝ Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնը, «Հասարակական ձայն» ՀԿ և այլն:</p>	<p>2020թ. փետրվար – Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա զեկույց, 2020թ. ապրիլ - Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական ազդեցության գնահատման զեկույց, Երևան</p> <p>Ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ մշակված հաշվետվությունների առնչությամբ՝ փաստաթղթերի հետագա բարելավման նպատակով</p>

3. Շահագրգիռ կողմերի նույնականացում և վերլուծություն

Հիմնական սահմանումները

Ծրագրի նպատակն է ապահովել գործընթացի նկատմամբ մասնակիցների պատասխանատվության զգացման բարձրացումը՝ ավելի լավ պատկերացում

ընձեռնելով թե՛ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ներկայիս իրավիճակի, թե՛ ոլորտի կառավարման միջազգային հաջող փորձի մասին՝ հնարավորություն տալով տարբեր շահագրգիռ կողմերի համատեղ բացերը լրացնելու ուղիներ գտնել և միասին մշակել ոլորտի ապագա զարգացման երկարաժամկետ տեսլականը, ինչպես նաև դրա իրականացման ռազմավարությունը:

Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավումը ներառում է Ծրագրի իրականացնողների կողմից նախաձեռնվելիք այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք ուղղված են ապահովելու բոլոր շահագրգիռ կողմերի պատշաճ մասնակցությունը հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակմանը: Դրա նպատակն է՝ բարձրացնել ներգրավվածությունը, թափանցիկությունը, ինչպես նաև պատասխանատվությունը Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի հանդեպ տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում:

Ծրագրի շահագրգիռ կողմերը սահմանվում են որպես անհատներ, պաշտոնական կամ ոչ պաշտոնական խմբեր և կազմակերպություններ և/կամ պետական մարմիններ, որոնց շահերի կամ իրավունքների վրա Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթուղթը կազդի ուղղակի կամ անուղղակի, դրական կամ բացասական կերպով, որոնք կարող է շահ ունենան Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի իրականացումից, և որոնք կարող են որևէ կերպ ազդել Ծրագրի արդյունքների վրա:

Համաձայն Համաշխարհային բանկի «Բնապահպանական և սոցիալական շրջանակ, շահագրգիռ կողմերի ներգրավման և տեղեկատվության բացահայտման մասին Բնապահպանական և սոցիալական թիվ 10 ստանդարտի» (ESS10), շահագրգիռ կողմերին կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

- **ազդակիր կողմեր** – շահագրգիռ կողմեր, որոնց վրա ազդել կամ կարող է ազդել ծրագիրը.
- **այլ հետաքրքրված կողմեր** – այլ կողմեր, որոնք կարող են շահ ունենալ ծրագրում:

Ծրագիրն ունի բազմաթիվ շահագրգիռ կողմեր, սկսած կառավարությունից, մասնավոր ոլորտից, հետազոտողներից, քաղաքացիական հասարակությունից և լայն հանրությունից: Այս ՇԿՆՊ փաստաթղթի նպատակների համար այն շահագրգիռ կողմերը, որոնց վրա կարող է ազդել քաղաքականության իրականացումը, կամ որոնք կարող են ներգրավվել քաղաքականության իրականացման գործընթացին, դասակարգվում են որպես **ազդակիր կողմեր**: Դրանց մեջ մտնում են, ի թիվս այլոց, հանքարդյունահանող ընկերություններ, հանքարդյունաբերության մեջ ներգրավված համայնքներ, հանքարդյունաբերության ոլորտի աշխատողներ, նրանց ուղղակի

ներկայացուցիչներ (օրինակ, արհմիություններ), Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչությունը, ԱՃԹՆ ԲՇԽ-ն:

Այլ հետաքրքրված կողմերի մեջ մտնում են անհատներ/ խմբեր/ կազմակերպություններ, որոնք չեն գտնվում Ծրագրի անմիջական ազդեցության տակ, սակայն դիտարկում կամ ընկալում են իրենց շահը՝ որպես կողմ, ում վրա ազդել է Ծրագիրը և/կամ, որոնք կարող են որևէ կերպ ազդել ծրագրի և դրա իրականացման գործընթացի վրա: Այլ հետաքրքրված կողմերի մեջ մտնում են, ի թիվս այլոց, պետական հաստատությունները, որոնք կարող են որևէ կերպ ներգրավված լինել հանքարդյունաբերության ոլորտի աշխատանքներում, օրինակ՝ ԱՆ, ՇՄՆ, ԷՆ, ԱՍՀՆ, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Կադաստրի կոմիտեն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը, գիտական հատվածը, քաղաքացիական հասարակությունը, միջազգային կազմակերպությունները, լրատվամիջոցները և հանրությունը:

Որպես շահագրգիռ կողմերի հատուկ կատեգորիա ՇԿՆՊ-ն առանձնացնում է **խոցելի խմբերին**, այսինքն՝ այնպիսի անհատներին կամ խմբերին, որոնց հանդեպ կարող է պահանջվել ներգրավման հատուկ ջանք իրենց խոցելի վիճակի³ պատճառով՝ ապահովելու նրանց հավասար մասնակցությունը Ծրագրի հետ առնչվող խորհրդակցություններում և որոշումների կայացման գործընթացում: Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության համատեքստում այս խմբերի կազմում է հանքերին և առնչվող շինություններին (օրինակ՝ պոչամբարներ, կեղտաջրերի խողովակաշարեր և այլն) մոտ գտնվող գյուղական բնակավայրերի բնակչությունը, որն անհամաչափորեն տուժում է օգտակար հանածոների արդյունահանումից և չունի հարթակ, որի միջոցով կկարողանա բարձրացնել իր մտահոգությունները: Սովորաբար, այս համայնքներին հասանելի չէ աշխատանքը հանքերում կամ առնչվող շինություններում, միննույն ժամանակ նրանց վրա բացասաբար են ազդում բնապահպանական և սոցիալական գործոնները (գյուղատնտեսական հողերի կրճատում, ջրի թունավորում, վերաբնակեցում և այլն):

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության համատեքստում մյուս խոցելի խումբը կանայք են, ովքեր սովորաբար քիչ աշխատանքային հնարավորություններ ունեն հանքարդյունաբերության ոլորտում տղամարդկանց համեմատությամբ: Այս

³ Խոցելի իրավիճակ կարող է առաջանալ անհատի կամ խմբի ռասայի, ազգության, էթնիկական կամ սոցիալական ծագման, գույնի, գենդերի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքի, գույքի, տարիքի, մշակույթի, գրագիտության, հիվանդության, ֆիզիկական կամ հոգեկան անունակության, աղքատության կամ տնտեսական անբարենպաստ վիճակի և բնական պաշարներից կախվածության կամ սակավության պատճառով:

ուրտում աշխատանքի ամենից հաճախ ընդունվում են տղամարդիկ, և ուրտում աշխատող կանանց թիվը շատ փոքր է, ինչի արդյունքում խախտվում է դերերի բաշխումը կանանց և տղամարդկանց միջև՝ ի օգուտ տղամարդկանց: Կանանց դերը նվազում է ոչ միայն աշխատանքային շուկայում և ընտանիքում, այլ նաև որոշումների կայացման գործընթացում: Սովորաբար, կանայք դուրս են մնում որոշումների կայացման գործընթացից, ավելի քիչ են մասնակցում հանրային քննարկումներին և ավելի քիչ հնարավորություններ ունեն բարձրացնելու իրենց մտահոգությունները և առաջարկությունները:

Ծրագրի շահագրգիռ կողմերը

Ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերը ներկայացված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2. Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի հիմնական շահագրգիռ կողմերի խմբերը:

Շահագրգիռ կողմի տիպը	Շահագրգիռ կողմի անունը	Շահը/ հետաքրքրությունը	Գնահատված թիվը
Ազդակիր կողմեր	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և Ընդերքի վարչություն	ՏԿԵՆ-ը և Ընդերքի վարչությունն անմիջականորեն ներգրավված են Ծրագրի իրականացման աշխատանքներին: Շահագրգիռ կողմ են հանդիսանում արդյունավետ և հիմնավորված օրենսդրության և ընթացակարգերի մշակմամբ հետաքրքրված լինելու համար, ինչը կստեղծի նպաստավոր միջավայր պատասխանատու հանքարդյունաբերության համար:	-
	Հանքարդյունահանող ընկերություններ և ոլորտի կազմակերպություններ (Հայաստանի հանքագործների և մետալուրգների	Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունը և ապագա օրենսդրական փոփոխություններն անմիջականորեն ուղղակի ազդեցություն կունենան հանքարդյունահանող ընկերությունների և ոլորտի	Հաշվառված՝ 900 հանքավայրեր (43 մետաղական, 789 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղցրահամ ջրի, 24

Շահագրգիռ կողմի տիպը	Շահագրգիռ կողմի անունը	Շահը/ հետաքրքրությունը	Գնահատված թիվը
	միություն)	կազմակերպություններ վրա: Շահագրգիռ կողմ են հանդիսանում օրենսդրական բեռը նվազեցնելու, սահմանափակումները վերացնելու և ոլորտի շահութաբերությունը բարձրացնելու մեջ հետաքրքրված լինելու համար:	ստորերկրյա հանքային ջրի) և 578 հանքերևակումներ (129 մետաղական, 449 ոչ մետաղական): Տրամադրված՝ շուրջ 432 ընդերքօգտագործման իրավունք՝ 26 մետաղական, 373 ոչ մետաղական և 33 հանքային ջրերի: Ոլորտային մեկ կազմակերպություն՝ Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունը:
	Հանքարդյունահանող ընկերություններ	Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունը և ապագա օրենսդրական փոփոխություններն անմիջականորեն ուղղակի ազդեցություն կունենան հանքարդյունահանող ընկերությունների վրա: Շահագրգիռ կողմ են հանդիսանում պատասխանատու հանքարդյունաբերությամբ հետաքրքրված լինելու համար, ինչի արդյունքում կունենան պակաս բնապահպանական, սոցիալական և առողջապահական բացասական ազդեցություններ:	-
	Հանքարդյունաբերության ոլորտի	Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունը և ապագա	10,529 մարդ, որոնցից 90% աշխատում են

Շահագրգիռ կողմի տիպը	Շահագրգիռ կողմի անունը	Շահը/ հետաքրքրությունը	Գնահատված թիվը
	աշխատողներ և արհմիություններ	օրենսդրական փոփոխություններն ուղղակի ազդեցություն կունենան հանքարդյունաբերության ոլորտի աշխատողների և միությունների վրա: Շահագրգիռ կողմ են հանդիսանում պատասխանատու հանքարդյունաբերությամբ հետաքրքրված լինելու համար, ինչի արդյունքում կունենան բարենպաստ աշխատանքային պայմաններ, աշխատանքային հիգիենա և անվտանգ շրջակա միջավայր:	մետաղական հանածոների հանքերում, 1 արհմիություն
	ԱՃԹՆ քազմաշահառու խումբ	Առաջնորդվելով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱՃԹՆ) սկզբունքներով՝ ՀՀ ԱՃԹՆ-ի քազմաշահառու խմբի կողմից նախատեսվել է աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետությունում պատասխանատու հանքարդյունաբերության (այսուհետ՝ ՊՀ) գործելատճի ներդրմանը՝ որպես երկրի կայուն զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Ելնելով ՊՀ-ն՝ որպես ոլորտում առաջնահերթություն սահմանելու ԱՃԹՆ ԲՇԽ-ի մոտեցումից՝ անհրաժեշտ է ռազմավարության մշակման գործընթացին առավելագույնս մասնակից դարձնել նաև ԱՃԹՆ ԲՇԽ-ին:	
Այլ հետաքրքրված կողմեր	Պետական մարմիններ (ԱՆ, ՇՄՆ, ԷՆ, ԱՍՀՆ, Բնության	Կարող են տարբեր եղանակներով ներգրավված լինել հանքարդյունաբերության ոլորտի աշխատանքներում: Շահագրգռված	-

Շահագրգիռ կողմի տիպը	Շահագրգիռ կողմի անունը	Շահը/ հետաքրքրությունը	Գնահատված թիվը
	<p>պահպանության և օգտակար հանածոների տեսչությունը, Կադաստրի կոմիտեն, Առողջապահության և աշխատանքի տեսչությունը, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը)</p>	<p>են արդյունավետ և հիմնավորված օրենսդրություն և ընթացակարգեր մշակելու մեջ, ինչը կստեղծի նպաստավոր միջավայր պատասխանատու հանքարդյունաբերության համար, այդ թվում՝ շրջակա միջավայրի, հանրային առողջապահության, քաղաքաշինության, հանրային անվտանգության համար և այլն:</p>	
	<p>Գիտական հանրություն</p>	<p>Կարող է տարբեր եղանակներով ներգրավված լինել հանքարդյունաբերության ոլորտի աշխատանքներում: Հետաքրքրված է պատասխանատու հանքարդյունաբերությամբ՝ պակաս բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցություններով և ապացույցների վրա հիմնված որոշումների կայացման և քաղաքականության մշակման խթանմամբ:</p>	-
	<p>Քաղաքացիական հասարակություն և լրատվամիջոցներ</p>	<p>Կարող են տարբեր եղանակներով ներգրավված լինել հանքարդյունաբերության ոլորտի աշխատանքներում: Հետաքրքրված են պատասխանատու հանքարդյունաբերությամբ, որը կբարձրացնի ոլորտի թափանցիկությունը և կունենա պակաս բնապահպանական, սոցիալական, առողջապահական և</p>	-

Շահագրգիռ կողմի տիպը	Շահագրգիռ կողմի անունը	Շահը/ հետաքրքրությունը	Գնահատված թիվը
		սոցիալական ազդեցություններ:	
	Միջազգային կազմակերպություններ	Կարող են տարբեր եղանակներով ներգրավված լինել հանքարդյունաբերության ոլորտի աշխատանքներում: Հետաքրքրված են պատասխանատու հանքարդյունաբերությամբ, որը կգործի թափանցիկ և հաշվետվողական կերպով:	-

▪ **Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ՀՀԿ) և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ)**

Ծրագրի հիմնական շահառուն ՀՀ կառավարությունն է: Կառավարության 2018-2022թթ. ծրագիրը ներառում է Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակմանը և բարեփոխումներին վերաբերող գործողություններ: Հիմնվելով «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում» առաջարկությունների վրա, ինչպես նաև ոլորտի ապագա զարգացման նպատակով, կառավարությունը նախաձեռնեց Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) ոլորտը կարգավորող նախարարությունն է և անմիջականորեն ղեկավարելու է Ծրագրի իրականացման աշխատանքները: Իր 2018-2022թթ. ծրագրում նախարարությունը նշել է Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակումը որպես հիմնական առաջնահերթություն: Այն կառաջնորդի քաղաքականության մշակման ու բարեփոխումների գործընթացը և կներգրավի այլ շահագրգիռ կողմերին քննարկումներին ու դիտարկմանը՝ Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) և Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) հետ սերտ համագործակցությամբ:

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության հետ առնչվող և Ծրագրի շահագրգիռ կողմեր հանդիսացող մյուս նախարարություններն են Արտակարգ իրավիճակների նախարարությունը (ԱԻՆ) և Առողջապահության նախարարությունը (ԱՆ):

▪ **Հանքարդյունահանող ընկերություններ**

Հանքարդյունաբերության մեջ ներգրավված ընկերությունները հանդիսանում են Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի հիմնական շահագրգիռ կողմերը:

Հանրապետական երկրաբանական ֆոնդի օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրում ներկայումս հաշվառվում են թվով 900 հանքավայրեր (43 մետաղական, 789 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղցրահամ ջրի, 24 ստորերկրյա հանքային ջրի) և 578 հանքերևակումներ (129 մետաղական, 449 ոչ մետաղական):

Ներկայումս տրամադրված է շուրջ 432 ընդերքօգտագործման իրավունք՝ 26 մետաղական, 373 ոչ մետաղական և 33 հանքային ջրերի: Ընդերքօգտագործման թույլտվությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության համար հետևել սույն հղմանը՝ <http://mtad.am/hy/mtad29.29.7/>:

Կա ոլորտային մեկ կազմակերպություն՝ Հայաստանի հանքագործների և մետալուրգների միությունը, որը գտնվում է Երևանում և ունի հանքարդյունաբերության հետ առնչվող յոթ անդամ կազմակերպություն: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք հետևել սույն հղմանը՝ <https://miningmetal.am/>:

▪ **Համայնքներ, որոնց վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է հանքարդյունաբերությունը**

Սահմանադրությունը երաշխավորում է համայնքների ինքնակառավարումը, նրանք իրավունք ունեն մասնակցել համայնքի տարածքում կամ համայնքի տարածքին մոտ իրականացվող հանքարդյունաբերական աշխատանքների հետ առնչվող որոշումների կայացմանը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների⁴ հնարավորությունները սահմանափակ են հանքարդյունաբերական ծրագրերի վրա ազդելու համար, իսկ երբեմն նրանց ինստիտուցիոնալ կարողությունները և փորձը թույլ չի տալիս որոշումների կայացման գործընթացին արդյունավետ մասնակցելու համար:

⁴ Գոյություն ունեն հանքարդյունաբերության ազդեցության տակ գտնվող տարբեր չափի հարյուրավոր համայնքներ: Օրինակ, Զանգեզուրի պղնձ-մոլիբդենային կոմբինատի դեպքում, որը շահագործում է բաց հանք Քաջարանում, որպես ազդակիր նույնականացվել են 9 համայնքներ: Դրանցից 7 փոքր գյուղական համայնքներ են (ամենափոքր համայնքների բնակչությունը մոտ 100 մարդ է, իսկ ամենամեծինը՝ 500) և 2 քաղաքներ (Քաջարանը՝ 7000 մարդ բնակչությամբ և Ղափանը՝ 42000): Այդ փոքր համայնքների վրա ազդում են պոչամբարները և պոլիպայի խողովակաշարերը: Դրանց համար աշխատանքը հանքերում սովորաբար մատչելի չէ, քանի որ գտնվում են հանքահորերից հեռու: Հանքարդյունաբերական շրջանների ավելի մանրամասն գնահատականի հետ կարել է ծանոթանալ Համաշխարհային բանկի 2016թ. «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարական գնահատվում» փաստաթղթում:

Հանքարդյունաբերության նկատմամբ տեղական համայնքների սկզբնական դիրքորոշումները և ընկալումները կարող են էապես տարբերվել համայնքից համայնք: Համայնքների մի մասը հանքարդյունաբերությունից օգտվում է պայմանագրային հիմունքներով աշխատատեղերի հասանելիության պատճառով, մինչդեռ մյուսներն ուղղակիորեն տուժում են հանքարդյունաբերական ծրագրերից՝ կրելով հանքարդյունաբերության բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները:

- **Հանքարդյունաբերության ոլորտում աշխատողներ և միություններ**

Հանքարդյունաբերության ոլորտն ունի աշխատատեղերի զգալի պոտենցիալ՝ համեմատաբար բարձր աշխատավարձով և Երևանից դուրս աշխատատեղերի հասանելիությամբ: 2019թ. նոյեմբերի դրությամբ հանքարդյունաբերությունում և բաց հանքերում աշխատում էր **10,529** մարդ՝ 457831 ՀՀԴ միջին ամսական աշխատավարձով (մոտ 1000\$)⁵:

Մետաղական հանածոների արդյունահանման ընկերություններում աշխատողների միջին թիվը 784 է, մինչդեռ ոչ մետաղականում՝ միջինը ընդամենը 13 աշխատող: Մետաղական հանածոների ոլորտում աշխատողների բաժինը կազմում է հանքարդյունաբերության ոլորտի ընդհանուր զբաղվածության 90%, ինչն իր հերթին, կազմում է տնտեսության արդյունաբերական ճյուղում զբաղվածների մոտ 10%⁶:

Երևանում կա ոլորտային գործող միություն՝ Հայաստանի լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը, որն ունի մոտ 6000 անդամ:

- **ԱՃԹՆ ԲԱԳՄԱՉԱԽԱՌՈՒ ԽՈՒՄԲ (ԲՇԽ)**

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) համաշխարհային ստանդարտ է՝ խթանելու բնական պաշարների բաց և հաշվետու կառավարումը: Այն ունի 53 անդամ երկրներ: Հայաստանը սկսել է ԱՃԹՆ անդամ երկիր դառնալու գործընթացը 2015թ. հուլիսին և միացել նախաձեռնությանը 2017թ.:

ԱՃԹՆ ԲԱԳՄԱՉԱԽԱՌՈՒ ԽՈՒՄԲը բաղկացած է ՀՀ կառավարության, հանքարդյունաբերության ընկերությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: ԱՃԹՆ ԲՇԽ-ն պատասխանատու է ԱՃԹՆ գործընթացի իրականացման համար, և դրա հիմնական նպատակն է

⁵ Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_142.pdf

⁶ Աղբյուրը՝ https://www.eiti.am/file_manager/Useful%20materials/StrategicEng.pdf

ապահովել Հայաստանի թեկնածությունը, իսկ այնուհետև՝ համապատասխանությունը ԱՃԹՆ ստանդարտին: Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ն պատասխանատու է իրականացման, մոնիթորինգի, գնահատման և որոշումների կայացման համար: Այն ունի 15 անդամ, որից վեցը կառավարության (լիազորված մարմինների) ներկայացուցիչներ են, չորսը՝ հանքարդյունահանող ընկերությունների և հինգը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ⁷:

- **Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ-ներ)**

ՔՀԿ-ները ներառում են ցանկացած կազմակերպություն՝ պաշտոնական կամ ոչ, որոնք կառավարության ապարատի մաս չեն, չեն բաշխում շահույթ իրենց տնօրեններին կամ աշխատողներին, անկախ են, և որոնցում մասնակցությունը ազատ ընտրության հարց է: ՔՀԿ-ների այս սահմանումը ներառում է ոչ պաշտոնական չգրանցված խմբեր և շարժումներ, խորհրդատվական խմբեր, համայնքային կազմակերպություններ և նախաձեռնություններ:

Հանքարդյունաբերությունը շատ բարդ և զգայուն թեմա է Հայաստանում, որը վերջին երկու տասնամյակների ընթացքում մշտապես եղել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ուշադրության և նախաձեռնությունների կենտրոնում: Կան բնապահպանական հարցերի առնչությամբ վերջերս տեղի ունեցած սոցիալական շարժումների մի քանի օրինակներ, մասնավորապես, կապված հանքարդյունաբերության հետ, որոնք նախաձեռնվել էին ընդհանուր հարցի շուրջ համախմբված մարդկանց ոչ պաշտոնական խմբերի կողմից: Ըստ տարբեր գնահատականների, կան շուրջ երկու տասնյակ ՀԿ-ներ, որոնք ակտիվորեն ներգրավված են բնապահպանական հարցերում: Դրանց մեծ մասը գտնվում է մայրաքաղաք Երևանում: Բոլոր համապատասխան ՀԿ-ները կնույնականացվեն և կընդգրկվեն խորհրդակցություններում:

Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթում առնչվող ՔՀԿ-ները բնապահպանության, թափանցիկության և ձեռներեցության վրա կենտրոնացած կազմակերպություններ են, քաղաքացիական նախաձեռնություններ, խմբեր և շարժումներ: Դրանց մեջ մտնում են Էկոլուրը՝ բնապահպանական տեղեկատվական ՀԿ-ն, որն ունի իր ինտերնետային կայքը բնապահպանության հետ առնչվող տեղեկատվության մեծ ծավալով, «Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը, որը կենտրոնանում է հանքարդյունաբերության ոլորտում օրենսդրական և որոշումների կայացման

⁷ Աղբիւրը՝ <https://www.eiti.am/en/MSG-composition?page=2>

գործընթացի վրա, Համահայկական բնապահպանական ճակատը, Բնապահպանական կրթության ցանցը, Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցը և այլն: Շահագրգիռ ՔՀԿ-ներից են նաև մի քանի առցանց լրատվական կայքեր, որոնք մշտապես ներգրավված են հանքարդյունաբերության ոլորտի հետազոտություններում, ինչպես օրինակ՝ Հետքը, ՍիվիլՆեթը, Ազատություն ռադիոկայանը: Հետևյալ ՀԿ-ները կազմում են ԱՃԹՆ ԲՇԽ-ի մաս՝ «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը», «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն, Երևանի պետական համալսարանը՝ Ռեզիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնը, «Հասարակական ձայն» ՀԿ-ն և այլն:

Քանի որ շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքներում հատուկ ուշադրություն է դարձվելու կանանց և երիտասարդների ներգրավմանը, այս խմբերի վրա կենտրոնացած կազմակերպությունները, հատկապես նրանք, որոնք գործում են հանքավայրերին մոտ համայնքներում, նույնպես նույնականացվում են որպես հետաքրքրված կողմեր: Նման կազմակերպությունների մեջ կարող են լինել կանանց ռեսուրսների կենտրոններ (Գորիսի Կանանց Զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամը, «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ն և այլն), կանանց ասոցիացիաներ, երիտասարդական ՀԿ-ներ և այլն:

- **Գիտական հանրություն**

Մի քանի գիտական և հետազոտական հաստատություններ իրենց հետաքրքրվածությունն են արտահայտել պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ և փորձերը խթանելու սոցիալական, բնապահպանական և տնտեսական տեսանկյունից պատասխանատու հանքարդյունաբերության միջազգային լավագույն փորձի կիրառումը Հայաստանում և տարածաշրջանում: Այդ թվում է Հայաստանի ամերիկյան համալսարանը, որը ստեղծել է «Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն» 2014թ., Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), որը ստեղծել է «Կայուն զարգացման կենտրոն» 2012թ., Գիտությունների ազգային ակադեմիան, որը հետազոտություններ է իրականացնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունների, այդ թվում հանքարդյունաբերությանն առնչվող թեմաներով, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, որն ունի Ընդերքաբանության և մետալուրգիայի ֆակուլտետ:

- **Երկ- և բազմակողմանի գործակալություններ**

Համաշխարհային բանկը՝ իր «Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցություն» (ԱՃԳԾԱ ՀՀ) հավատարմագրային հիմնադրամի միջոցով,

հանդիսանում է «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն II» սույն դրամաշնորհի շրջանակներում Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակման խորհրդատվական գործընկերը և ֆինանսավորողը:

Մի քանի երկ- և բազմակողմանի գործակալություններ՝ ԵԱՀԿ, ՄԱԿ ԶԳ/ՄԱԿ ԲԾ, USAID, GIZ, KfW և այլն, ներգրավված են այնպիսի աշխատանքներում, որոնք առնչվում կամ կարող են առնչվել հանքարդյունաբերության ոլորտի հետ: Համապատասխանաբար, դրանք նույնպես հանդիսանում են Ծրագրի շահագրգիռ կողմեր:

4. Մեթոդաբանություն

Հիմնական սկզբունքները

Լավագույն միջազգային փորձի մոտեցումներին համապատասխանելու համար ծրագրի իրականացման ժամանակ կկիրառվեն շահագրգիռ կողմերի ներգրավման հետևյալ սկզբունքները՝

- *Բաց և շարունակական մոտեցում:* Շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները կազմակերպվելու են շարունակական և բաց կերպով՝ առանց արտաքին մանիպուլյացիաների, միջամտության, հարկադրանքի կամ սեփականության:
- *Տեղեկացված մասնակցություն և հետադարձ կապ:* Տեղեկատվությունը կտրամադրվի և լայնորեն կտարածվի բոլոր շահագրգիռ կողմերին համապատասխան լեզվով (հայերեն) և ձևաչափով: Հնարավորություններ կտրվեն շահագրգիռ կողմերի արձագանքները հաղորդելու, մեկնաբանությունները վերլուծելու և դրանց անդրադառնալու, առաջարկություններ և մտահոգություններ հայտնելու համար:
- *Ընդգրկունություն և զգայունություն:* Շահագրգիռ կողմերի նույնականացումը կիրականացվի ավելի լավ հաղորդակցություն ապահովելու և արդյունավետ հարաբերություններ կառուցելու համար: Ծրագրերի մասնակցային գործընթացը ընդգրկուն է: Խրախուսվում է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը խորհրդակցությունների և քննարկումների գործընթացին այնքանով, որքանով թույլ են տալիս ներկայիս հանգամանքները: Բոլոր շահագրգիռ կողմերին կտրվի տեղեկատվությունից օգտվելու հավասար հասանելիություն:

Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների ամփոփում

Շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը հանդիսանում է ծրագրի արդյունավետության նախապայման: Ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի ներգրավումը կիրականացվի հետևյալ երկու հիմնական ուղղություններով՝

- խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ և անդրադարձերի հավաքագրում ծրագրի ողջ ընթացքում.
- Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի և առնչվող իրավական փաստաթղթերում պլանավորված փոփոխությունների մասին իրազեկման բարձրացման գործողություններ:

Ընդհանուր առմամբ, առաջարկվում են շահագրգիռ կողմերի ներգրավման հետևյալ գործողությունները՝

Հետազոտությունների և խորհրդակցությունների փուլ

- *Ֆոկուս խմբերի քննարկումներ (ՖԽԲ) և/կամ ընդհանուր ժողովներ*
- *Կլոր-սեղան քննարկումներ և ֆորումներ*
- *Փորձագիտական և հիմնական տեղեկատվական հարցազրույցներ*
- *Առցանց հետադարձ կապի հարթակ*
- *Բողոքների արձագանքման մեխանիզմ*

Քաղաքականության փաստաթղթի ավարտման և ընդունման փուլ

- *Քաղաքականության փաստաթղթի նախագծի հրապարակում e-draft.am պորտալում (միասնական ինտերնետային կայք իրավական փաստաթղթերի, նախագծերի հրապարակման համար)*

Իրազեկման բարձրացման և կարողությունների զարգացման փուլ

- *Դասընթացներ, սեմինարներ և կարողությունների բարձրացման գործողություններ՝ ոլորտի բնապահպանական և սոցիալական կայունության շեշտադրմամբ:*
- *Իրազեկման բարձրացման գործողություններ, օրինակ՝ ֆորումներ, կոնֆերանսներ և այլն:*
- *Լրատվական նյութերի և նորությունների հրապարակում առցանց մամուլում, պաշտոնական ինտերնետային կայքերում և սոցիալական լրատվամիջոցների էջերում:*

Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը հատուկ ուշադրություն է դարձնելու կանանց, երիտասարդների, խոցելի խմբերի ներգրավմանը, օրինակ՝ ցուցաբերելով այս խմբերին և նրանց ներկայացուցիչներին հատուկ մոտեցում՝ հարմարեցված յուրաքանչյուր խմբին, ապահովելու նրանց համամասնական մասնակցությունը ֆոկուս խմբերի քննարկումներին, ընդհանուր ժողովներին և խորհրդակցական հանդիպումներին: Ֆոկուս խմբերի քննարկումները, ընդհանուր ժողովները, հանրային խորհրդակցական հանդիպումները և կլոր-սեղան քննարկումները կիրականացվեն այնպիսի վայրերում, որոնք մատչելի կլինեն սահմանափակ կարողություններով մարդկանց համար, եթե նման շենքեր և շինություններ կլինեն համայնքներում: Կառաջարկվեն հաղորդակցության բազմազան ձևեր, այդ թվում երես առ երես խորհրդակցական հանդիպումներ, առցանց հարթակներ, տպված նյութեր, որոնք ցույց կտան, թե որ քաղաքացիները կամ կազմակերպությունները՝ ինչպես կարող են ներկայացնել պատասխան կարծիք և ներգրավվել քաղաքականության քննարկման գործընթացում:

Շահագրգիռ կողմերից ստացված պատասխանները, կարծիքները և առաջարկությունները պատշաճ կերպով հաշվի կառնվեն Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի նախագծի մշակման և փոփոխության ժամանակ: Շահագրգիռ կողմերից ստացված բոլոր հարցերը, արձագանքները, կարծիքները և առաջարկությունները՝ անկախ նրանից, թե ինչ ուղիներով են ներկայացվել, կգրանցվեն, և դրանց կտրվի պաշտոնական անդրադարձ Քաղաքականության փաստաթղթի հեղինակների կողմից՝ շահագրգիռ կողմերին ուղղված պաշտոնական ծանուցմամբ: Դա կարող է լինել փոստով ուղարկված նամակ, պաշտոնական պատասխան էլ. փոստով, պատասխան հանրության մեկնաբանությունը e-draft.am կայքում և այլն: Պատասխան հաղորդագրությունը կպարզաբանի, թե ինչպես են հաշվի առնվել արձագանքները, կարծիքները և առաջարկությունները Քաղաքականության փաստաթղթում, կամ եթե դրանք տեղին չէին, ապա ինչ պատճառով չեն արտացոլվել փաստաթղթում:

Ծրագիրը լայնորեն կկիրառի www.e-darft.am պորտալում մատչելի տեխնիկական լուծումները: Այն միասնական կայք է, որտեղ տեղադրվում են ՀՀ կառավարական մարմինների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը, քաղաքականության փաստաթղթերը և ռազմավարությունները: Հայտնի է նաև, որ այս կայքը լայնորեն օգտագործվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և ընդհանրապես հանրության կողմից: Այս առցանց հարթակը հնարավորություն է տալիս քաղաքականության փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերը ներկայացնել հանրությանը առցանց քննարկումներ կազմակերպելու միջոցով, և արդյունքում՝ խրախուսել քաղաքացիական

հասարակության ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը օրենքների մշակման գործընթացում: Գրանցված մասնակիցները կարող են ներկայացնել առաջարկություններ, ծանոթանալ իրավական ակտերի նախագծերում արված առաջարկների վերաբերյալ լեզրակցություններին, ընդունված առաջարկներին, կամ այլ առաջարկների մերժման հիմնավորումներին:

Կպատրաստվի շահագրգիռ կողմերի ներգրավման և խորհրդակցական գործողություններն ամփոփող հաշվետվություն, ներառյալ ստացված արձագանքները և արձագանքներին տրված պատասխանները, որը կբացահայտվի քաղաքականության նախագծի հետ:

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան

Ինչպես արդեն նշվեց, շահագրգիռ կողմերի ներգրավումն իրականացվելու է՝ 1) շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելու և ծրագրի ողջ ընթացքում նրանց անդրադարձերը հավաքագրելու, 2) Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի և առնչվող իրավական փաստաթղթերում պլանավորված փոփոխությունների մասին իրազեկման բարձրագույն գործողություններ իրականացնելու համար: Այս ընդհանուր նպատակների հիման վրա մշակվել է «Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան», որը ներկայացվում է 2 աղյուսակում

Աղյուսակ 3. Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան:

Ծրագրի փուլ	Շահագրգիռ կողմերի ներգրավման մեթոդը	Թիրախային շահագրգիռ կողմեր	Շահագրգիռ կողմերի ներգրավման գործողության նպատակը	Խորհրդատվության թեման/ հաղորդագրություն	Պատասխանատուները
<p>1. Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի նախագծի մշակում</p> <p>(հետազոտությունների և խորհրդակցությունների փուլ)</p>	<p>1.1.1 Ֆոկուս խմբի քննարկումներ (ՖՄՔ) և/կամ ընդհանուր ժողովներ</p> <p>1.1.2 Կլոր-սեղանքննարկումներ և ֆորումներ</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Հանքարդյունաբերության ուղղակի կամ անուղակի ազդեցության տակ գտնվող համայնքներ (այդ թվում հանքարդյունաբերությունում աշխատող համայնքի ներկայացուցիչներ) ▪ Գործատուների ասոցիացիաներ և միություններ ▪ Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ ▪ Հետազոտական և գիտական հանրության հաստատություններ ▪ Անկախ փորձագետներ ▪ Հանքարդյունաբերության 	<ul style="list-style-type: none"> ▪ Պարզել տեղական համայնքների մոտ հանքարդյունաբերության ոլորտի մասին հիմնական ընկալումները, դրա հետագա զարգացման տեսլականը և այլն ▪ Հասկանալ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ապագայի միասնական տեսլականը ▪ Հաստատել կառուցողական երկխոսություն հիմնական շահագրգիռ կողմերի միջև ▪ Պարզել շահագրգիռ կողմերի մոտ հանքարդյունաբերության ոլորտի մասին ընկալումները, դրա հետագա զարգացման տեսլականը և այլն ▪ Շահագրգիռ կողմերի մոտ զարգացնել պատասխանատվության զգացում ▪ Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի հանդեպ 	<ul style="list-style-type: none"> ▪ ՖՄՔ-ներ և/կամ ընդհանուր ժողովները կանցկացվեն նախապես մշակված սոցիալական հետազոտությունների մեթոդաբանության հիման վրա, ՖՄՔ-ները, քննարկումները և/կամ ընդհանուր ժողովները կհետևեն հարցազրույցների մշակված ուղեցույցներին ▪ Կլոր-սեղանքննարկումները և ֆորումները կանցկացվեն նախապես մշակված օրակարգի հիման վրա, ▪ Կքննարկվեն Քաղաքականության փաստաթղթում ներառված առանցքային դրույթները 	<p>ՀՏԶՀ (խորհրդատվական ընկերության միջոցով)</p>

		<p>ներկայացուցիչներ</p> <ul style="list-style-type: none"> ▪ Պետական կազմակերպություններ 			
	<p>1.2 Փորձագիտական և հիմնական տեղեկատվական հարցազրույցներ</p>	<p>Հետազոտական հաստատությունների ներկայացուցիչներ</p> <p>Անկախ փորձագետներ</p> <p>ՔՀԿ-ների ներկայացուցիչներ</p> <p>Միությունների ներկայացուցիչներ</p> <p>Արդյունաբերության ներկայացուցիչներ</p> <p>Կառավարության ներկայացուցիչներ</p>	<ul style="list-style-type: none"> • Ստանալ անհրաժեշտ փորձագիտական գիտելիքներ Քաղաքականության փաստաթղթի առանցքային դրույթների մասին 	<ul style="list-style-type: none"> • Քաղաքականության փաստաթղթում ներառված առանցքային դրույթներ 	<p>ՀՏԶՀ (խորհրդատվական ընկերության միջոցով)</p>
	<p>1.3 Բողոքների արձագանքման մեխանիզմ (այդ թվում պորտալ բողոքների և արձագանքների ներկայացման համար)</p>	<p>Բոլոր շահագրգիռ կողմերը և լայն հանրություն</p>	<ul style="list-style-type: none"> • Որոշել առանցքային շահագրգիռ կողմերին ներկայացնել իրենց բողոքները, արձագանքը և առաջարկությունները Ծրագրի որևէ հարցի առնչությամբ 	<ul style="list-style-type: none"> • Ծրագրի գործողություններ ընդհանրապես 	<p>ՀՏԶՀ (խորհրդատվական ընկերության միջոցով)</p>
<p>2. Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության</p>	<p>2.1 Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի նախածի</p>	<p>ՔՀԿ-ների ներկայացուցիչներ</p> <p>Հետազոտական հաստատությունների ներկայացուցիչներ</p>	<ul style="list-style-type: none"> • Հնարավորություն տալ հիմնական շահագրգիռ կողմերին ներկայացնել իրենց կարծիքը, արձագանքը և առաջարկությունները Քաղաքականության 	<ul style="list-style-type: none"> • Քաղաքականության փաստաթղթում ներառված առանցքային դրույթներ 	<p>ՏԿԵՆ</p>

<p>փաստաթղթի ընդունում</p> <p>(Քաղաքական ության փաստաթղթի ավարտման և ընդունման փուլ)</p>	<p>բացահայտում e-draft.am պորտալում (միասնական ինտերնետային կայք իրավական փաստաթղթերի նախագծերի հրապարակման համար)</p>	<p>Անկախ փորձագետներ Համայնքներ և լայն հանրություն</p>	<p>փաստաթղթում</p> <ul style="list-style-type: none"> Միավորել և անդրադառնալ Քաղաքականության փաստաթղթում բարձրացրած առաջարկներին, կարծիքների նկատառումներին: Քաղաքականության փաստաթղթի հետագա փոփոխություն և բարելավում ստացված արձագանքների հիման վրա 		
<p>3. Ընդունված Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթուղթ</p> <p>(իրագրված և բարձրացման և կարողությունների զարգացման փուլ)</p>	<p>3.1 Դասընթացներ սեմինարներ և կարողությունների զարգացման գործողություններ՝ ոլորտի բնապահպանական և սոցիալական կայունության շեշտադրմամբ</p>	<p>Համապատասխան ոլորտային նախարարությունների, հատկապես ՏԿԵՆ-ի, ՇՄՆ-ի, ԱԻՆ-ի, տեսչական մարմինների և այլ առանցքային շահագրգիռ կողմերի համար</p>	<ul style="list-style-type: none"> Բարձրացնել իրագրվածությունը Քաղաքականության փաստաթղթի մասին Հնարավորություն տալ ստեղծելու միջավայր Քաղաքականության հաջող և արդյունավետ իրականացման համար 	<ul style="list-style-type: none"> Քաղաքականության փաստաթղթում ներառված առանցքային դրույթներ Պլանավորված փոփոխություններ առնչվող օրենսդրական ակտերում և դրույթներում 	<p>ՏԿԵՆ</p>
<p>կարողությունների զարգացման փուլ)</p>	<p>3.2 Իրագրված բարձրացման գործողություններ, օրինակ ֆորումներ, կոնֆերանսներ և այլն</p>	<p>Պետական գործակալություններ, ՔՀԿ-ներ, հետազոտական հաստատություններ, բիզնես, ազդակիր համայնքներ</p>	<ul style="list-style-type: none"> Տարաբեղ քաղաքականության առաջնահերթությունները հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում Հնարավորություն տալ ստեղծելու միջավայր Քաղաքականության հաջող և արդյունավետ իրականացման համար Հաջողությամբ և արդյունավետ 	<ul style="list-style-type: none"> Քաղաքականության փաստաթղթում ներառված առանցքային դրույթներ Պլանավորված փոփոխություններ առնչվող օրենսդրական ակտերում և դրույթներում 	<p>ՏԿԵՆ</p>

			<p><i>իրականացնել Քաղաքականությունը</i></p>		
	<p><i>3.3 Լրատվական նյութերի և նորությունների հրապարակում առցանց մամուլում, պաշտոնական ինտերնետային կայքերում և սոցիալական լրատվամիջոցների էջերում</i></p>	<p><i>Լայն հանրություն</i></p>	<ul style="list-style-type: none"> ▪ <i>Տարածել քաղաքականության առաջնահերթությունները հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում և լայն հանրությունում</i> ▪ <i>Բարձրացնել իրազեկվածությունը Քաղաքականության փաստաթղթի մասին</i> 	<ul style="list-style-type: none"> ▪ <i>Քաղաքականության փաստաթղթում ներառված առանցքային դրույթներ</i> ▪ <i>Պլանավորված փոփոխություններ առնչվող օրենսդրական ակտերում և դրույթներում</i> 	<p><i>ՏԿԵՆ</i></p>
<p>4. Օրենսդրական բարեփոխումներ հանքարդյունաբերության ոլորտում</p>	<p><i>4.1 Հանքարդյունաբերական ոլորտի օրենսդրական փոփոխությունների քննարկումներ</i></p> <p><i>4.2 Իրավական ակտերի հրապարակումը e-draft.am հարթակում</i></p>	<p><i>Ոլորտի մասնակիցներ, պետական գործակալություններ, ՔՀԿ-ներ, հետազոտական հաստատություններ</i></p>	<ul style="list-style-type: none"> • <i>Հնարավորություն տալ հիմնական շահագրգիռ կողմերին ներկայացնել իրենց կարծիքը, արձագանքը և առաջարկությունները առնչվող օրենսդրական ակտերում և դրույթներում առաջարկվող փոփոխությունների ի վերաբերյալ</i> 	<ul style="list-style-type: none"> ▪ <i>Փոփոխություններ առնչվող օրենսդրական ակտերում և դրույթներում</i> 	<p><i>ՏԿԵՆ</i></p>

Տեղեկատվության բացահայտման առաջարկվող ռազմավարությունը

Ծրագրի գործողությունների մասին տեղեկատվությունը բացահայտելիս կիրառվելու են հետևյալ սկզբունքները՝

- Ծրագիրը կապահովի, որ հրապարակվելիք տեղեկատվությունը լինի դյուրամատչելի և հեշտ հասանելի, տրամադրվի շահագրգիռ կողմերին ժամանակին և որակյալ կերպով.
- տեղեկատվության բացահայտման գործընթացը կնախաձեռնվի Ծրագրի հենց սկզբից և կշարունակվի Ծրագրի իրականացման ողջ ընթացքում.
- տեղեկատվության բացահայտման համար կօգտագործվեն բազմազան պորտալներ, այդ թվում, և ոչ միայն՝ պաշտոնական ինտերնետային կայքերը, սոցիալական լրատվամիջոցները, նորությունների կայանները և այլն:

Տեղեկատվության բացահայտման նախնական ռազմավարությունը ներկայացվում է 4 աղյուսակում:

Table 4. Տեղեկատվության բացահայտման նախնական ռազմավարությունը:

Ծրագրի փուլ	Թիրախային շահագրգիռ կողմեր	Բացահայտվելիք տեղեկատվությունը	Առաջարկվող մեթոդները և ժամկետները
<p>Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի նախագծի մշակում</p> <p>(հետազոտությունների և խորհրդակցությունների փուլ)</p>	<p>Պետական կազմակերպություններ, տեղական համայնքներ, ՀԿ-ներ և գիտական հանրություն, հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչներ, այլ</p>	<p>Ծրագրի հայեցակարգ, խորհրդատվության գործընթաց / ՇԿՆ, ԲԱՄ, ծրագրի մշակման թարմացում</p>	<p>Տեղեկատվության տարածում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) կայքի, ՀՏՁՀ կայքի, ՏԿԵՆ կայքի, ֆեյսբուքյան էջերի միջոցով:</p> <p>Հանրային ծանուցումներ, էլեկտրոնային հրապարակումներ առցանց/սոցիալական լրատվամիջոցների և մամուլի հաղորդագրությունների միջոցով:</p>
<p>Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի ընդունում</p> <p>(Քաղաքականության փաստաթղթի ավարտման և ընդունման փուլ)</p>	<p>Պետական կազմակերպություններ, տեղական համայնքներ, ՔՀԿ-ներ և գիտական հանրություն, մամուլի ներկայացուցիչներ, հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչներ,</p>	<p>Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի նախագիծ</p> <p>Ծրագրի զարգացման թարմացում, ժամկետ, ԲԱՄ</p>	<p>Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի նախագծի հրապարակում e-draft.am պորտալում, Քաղաքականության փաստաթղթի նախագծի սպված օրինակները մատչելի են նշված հանրային վայրերում:</p> <p>Տեղեկատվության տարածում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության</p>

Մրագրի փուլ	Թիրախային շահագրգիռ կողմեր	Բացահայտվելիք տեղեկատվությունը	Առաջարկող մեթոդները և ժամկետները
	<p>հանքարդյունաբերության ոլորտի ընկերություններ, այլ</p>	<p>ընթացակարգ</p>	<p>(ԱՃԹՆ) կայքի, ՀՏՁՀ կայքի, ՏԿԵՆ կայքի, ֆեյսբուքյան էջերի միջոցով:</p> <p>Հանրային ծանուցումներ, էլեկտրոնային հրապարակումներ առցանց/սոցիալական լրատվամիջոցների և մամուլի հաղորդագրությունների միջոցով:</p>
<p>Ընդունված Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթուղթ</p> <p>(հրազեկման բարձրացման և կարողությունների զարգացման փուլ)</p>	<p>Պետական կազմակերպություններ, Նախարարություններ ի պատասխանատու աշխատակիցներ, ՔՀԿ-ներ և գիտական հանրություն, մամուլի ներկայացուցիչներ, հանքարդյունաբերության ոլորտի աշխատողներ, այլ</p>	<p>Հաստատված Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթուղթ, ուղեցույցներ և էլեկտրոնային նյութեր</p> <p>Մրագրի փաստաթղթեր</p> <p>ՇԿՆՊ մոնիթորինգի հաշվետվություն</p> <p>ԲԱՄ կատարման հաշվետվություն</p>	<p>Հանրային ծանուցումներ, էլեկտրոնային հրապարակումներ և մամուլի հաղորդագրություններ Մրագրի կայքում, սոցիալական լրատվամիջոցների միջոցով, տպած օրինակների տարածում նշված հանրային վայրերում, մամուլի հաղորդագրություններ տեղական լրատվամիջոցներում:</p>
<p>Ոլորտում օրենսդրական բարեփոխումներ և փոփոխությունների նախաձեռնում</p>	<p>Պետական կազմակերպություններ, նախարարություններ ի պատասխանատու աշխատակիցներ, տեղական համայնքներ, ՔՀԿ-ներ և գիտական հանրություն, մամուլի ներկայացուցիչներ, հանքարդյունաբերության ոլորտի աշխատողներ, այլ</p>	<p>Համապատասխան իրավական ակտերի և դրույթների փոփոխություններ</p>	<p>Իրավական ակտերի նախագծերի փոփոխությունների հրապարակում e-draft.am պորտալում, համապատասխան իրավական ակտերի փոփոխությունների տպած օրինակները մատչելի են նշված հանրային վայրերում:</p> <p>Տեղեկատվության տարածում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) կայքի, ՀՏՁՀ կայքի, ՏԿԵՆ կայքի, ֆեյսբուքյան էջերի միջոցով:</p> <p>Հանրային ծանուցումներ, էլեկտրոնային հրապարակումներ առցանց/ սոցիալական լրատվամիջոցների և մամուլի հաղորդագրությունների միջոցով:</p>

5. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ԲԱՄ-ի ներածություն

Ծրագրի մակարդակով կստեղծվի Բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը կպահպանվի Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: ԲԱՄ-ը համարվում է արդյունավետ գործիք՝ Ծրագրի գործողությունների վերաբերյալ բողոքների վաղ հայտնաբերման, գնահատման և լուծման համար: Հնարավոր բողոքների վաղ հայտնաբերումը և ընկալումը կարող է նպաստել ծրագրի գործողությունների հետագա բարելավմանը: ԲԱՄ-ը կապահովի, որպեսզի Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը կարողանան ներգրավվել Ծրագրի իրականացման գործընթացում, ծրագրի անձնակազմին ներկայացնել պրակտիկ առաջարկներ/կարծիքներ Ծրագրի գործողությունների վերաբերյալ, ինչն էլ թույլ կտա լինել առավել հաշվետու, թափանցիկ և արձագանքող:

ԲԱՄ-ում ներառված են հետևյալ առանցքային սկզբունքները՝

- Բողոքները կդիտարկվեն կոնֆիդենցիալ սկզբունքով, կգնահատվեն անաչառորեն և կկարգավորվեն թափանցիկ կերպով:
- Ծրագրի շահառուները կարող են օգտվել մի շարք կոնտակտային տարբերակներից (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, փոստային հասցե և այլն): ԲԱՄ-ը հասանելի է բոլոր շահագրգիռ կողմերի համար:
- ԲԱՄ-ը նախատեսված է բողոքողների պահանջները կարգավորելու համար:
- Բոլոր պարզ և բարդ բողոքներին կտրվեն հնարավորինս արագ արձագանք և լուծումներ: Բողոքի առնչությամբ ձեռնարկված գործողությունները կլինեն արագ, որոշիչ և կառուցողական:

ՀՏԶ-ն և ՏԿԵՆ-ը իրենց բողոքների արձագանքման մեխանիզմների միջոցով կարձագանքեն Ծրագրի վերաբերյալ քաղաքացիների բոլոր տեսակի մտահոգություններին և կարծիքներին: Քաղաքացիների մտահոգությունների և բողոքներին արձագանքելու վերաբերյալ տվյալները կհավաքվեն, ինչն էլ կնպաստի ավելի բարձրիաշվետվողականությանը և արագ արձագանքմանը: ՀՏԶ-ն պետք է հետևի, որ բողոքների արձագանքման մեխանիզմները առկա լինեն և պատշաճ ձևով ներկայացվեն, բոլոր բողոքները սահմանված ժամկետում արձագանք և լուծում ստանան, ինչպես նաև բոլոր բողոքները սահմանված կարգով արձանագրվեն տեղական և ծրագրի մակարդակներում:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն արդեն ստեղծել է Բողոքների արձագանքման մեխանիզմներ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի շրջանակում, օրինակ՝ Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (ՄՆՏԶ), Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման (ՏՏԵԶ) ծրագրերի շրջանակում: Այս մեխանիզմները կարող են արդյունավետորեն վերականգնվել և կիրառվել «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթուղթ II» դրամաշնորհային ծրագրի համար: Բողոքների ներկայացման համար ՀՏԶ-ն ներկայումս ընտրել է ԲԱՄ գործիքներ, որոնք ներառում են էլ. փոստ, թեժ գիծ և վեբ գործիք:

ՀՏՁՀ-ի կողմից ստեղծված ԲԱՄ մեխանիզմը կօգտագործվի սույն ծրագրի համար նշանակված բողոքների ստացման համակարգողի միջոցով և կապահովվի, որ սույն Ծրագրի առնչությամբ ստացված բոլոր հարցերը, կարծիքները և բողոքները արձանագրվեն հատուկ տվյալների բազայում և պատասխան/արձագանք ստանան: ՀՏՁՀ-ի ԲԱՄ հաղորդակցության ուղիներն են՝ բողոքների ստացման համակարգող, հատուկ էլ. հասցե՝ բողոքներ ստանալու համար (support@atdf.am), վեբ գործիք՝ բողոքները հավաքելու համար (<http://atdf.am/hy/Home/ContactUs>) և թեժ գիծ (+374 10 24 71 23), ինչպես նաև փոստային հասցե (Երևան, Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ):

ՏԿԵՆ-ի կողմից կօգտագործվեն ԲԱՄ հաղորդակցության հետևյալ ուղիները՝ Ընդերքի վարչությունը՝ որպես բողոքների համակարգող, Վարչության պետի էլ հասցեն (s.abrahamyan@mta.gov.am), հեռախոսահամարը (+37410 511 389) և փոստային հասցեն (Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք 3): Դիմորդները կարող են նաև օգտագործել պաշտոնական ուղիներ իրենց բողոքները նախարարությանը ներկայացնելու համար՝ զանգահարելով թեժ գիծ ((010)51-13-79, (010)51-13-09, (011)52-65-73) կամ գրելով առցանց նամակ ՏԿԵՆ-ի կայքում (<http://mtad.am/en/write-a-letter/>).


ՀՏՁՀ-ն պարտավոր է պարբերաբար (առնվազն ամեն ամիս) ստուգել, ամփոփել բողոքներին արձագանքելու գրանցամատյանները և վարել թարմացված/արդի բողոքների գրանցամատյան ողջ ծրագրի ընթացքում: Բողոքների մեխանիզմը հստակ ցույց կտա ստացված հարցերի/բողոքների/կարծիքների ամփոփ նկարագիրը, ամսաթիվը, բողոք ներկայացնողի անունը/կոնտակտային տվյալները, եթե առկա են, պատասխանի ներկայացման ամսաթիվը, արձագանքման կարգավիճակը և դեռևս չլուծված գործողությունների հաջորդ քայլերը: Անանուն բողոքները և կարծիքները նույնպես կարձանագրվեն:

ԲԱՄ տեղեկատվության հաղորդում Ծրագրի շահագրգիռ կողմերին

ԲԱՄ տեղեկատվությունը կհաղորդվի շահագրգիռ կողմերին ֆոկուս խմբերի քննարկումների, հանրային խորհրդատվական հանդիպումների, կլոր-սեղան քննարկումների և այլնի ընթացքում: ԲԱՄ-ի վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում բողոք ներկայացնելու կոնտակտային տվյալները, կներկայացվեն նաև Ծրագրին առնչվող բոլոր տպագիր նյութերում (գրքույկներ, բուկլետներ, պաստառներ):

Բացի այդ, բողոքների և հետադարձ կապի մեխանիզմները պետք է դյուրամատչելի և հասանելի լինեն ՀՏՁՀ-ի կայքում: Այս կայքը ներառում է հատուկ բաժին/էջ՝ ՀՏՁՀ-ին բողոքներ և կարծիքներ ներկայացնելու հարցում աջակցելու համար: Այն կներկայացնի մանրամասն տեղեկատվություն Ծրագրին առնչվող ԲԱՄ-ի և ընթացակարգերի մասին, Բողոքների ստացման համակարգողի անունը/կոնտակտային տվյալները (էլ. հասցե, հեռախոսահամար, փոստային հասցե, պատասխանատվություններ և այլն):

Բողոքների արձագանքում



Գծապատկեր 1. Ստեղծված ԲԱՄ՝ ՀԲ կողմից ֆինանսավորվող ծրագրի համար ՀՏԶՆ մակարդակով:

ՀՏՁՀ Բողոքների ստացման համակարգողը (ԲՄՀ) ներկայացված բողոքը կգրանցի Բողոքների գրանցամատյանում և կդիտարկի դրանք 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում, այդ թվում կիրականացնի ստուգում, խաչաձև-ստուգում, վերլուծություն և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կկապվի դիմորդի հետ: Անհրաժեշտության դեպքում, ԲՄՀ-ն սույն գործընթացում կներգրավի այլ համապատասխան բաժինների մասնագետների: Իրականացված ուսումնասիրության հիման վրա՝ ԲՄՀ-ն կպատրաստի Առաջարկությունների հաշվետվություն և կներկայացնի ՀՏՁՀ-ի գործադիր տնօրենին: Այն բողոքները, որոնք կարող են լուծվել ՀՏՁՀ Բողոքների ստացման համակարգողի միջոցով/մակարդակով, ՀՏՁՀ-ի գործադիր տնօրենին այլևս չեն փոխանցվի:

Եթե ՀՏՁՀ ԲՄՀ-ն գեկուցում է, որ բողոքը ողջամիտ է և կարող է լուծում ստանալ ՀՏՁՀ-ի մակարդակով, ՀՏՁՀ գործադիր տնօրենը դեպքը կուսումնասիրի 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում և կուղարկի ՀՏՁՀ-ի համապատասխան մասնագետին և կհանձնարարի զբաղվել դիմումներով պաշտոնապես սահմանված կարգով: Նշանակված մասնագետը նորից կընդունի դիմումը և խնդիրը լուծելու համար կնախաձեռնի էական միջոցառումներ՝ համապատասխան Բաղադրիչի ընթացակարգերի համաձայն:

Եթե ՀՏՁՀ ԲՄՀ-ն գեկուցում է, որ բողոքը ողջամիտ չէ և/կամ չի կարող լուծում ստանալ ՀՏՁՀ-ի մակարդակով, ՀՏՁՀ գործադիր տնօրենը դեպքը կուսումնասիրի 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում և կորոշի՝

- Դեպքը կրկին դիտարկել ԲՄՀ-ի կողմից՝ ՀՏՁՀ-ի և հնարավորության դեպքում անկախ փորձագետների ներգրավմամբ (նշելով նախորդ ուսումնասիրության թերությունները): Դիմորդը նույնպես կարող է հրավիրվել ՀՏՁՀ՝ մասնագետների հետ հանդիպելու և լրացուցիչ տեղեկատվություն/հիմնավորումներ ներկայացնելու համար, կամ
- հաստատել բացասական պատասխանը և հանձնարարել ԲՄՀ-ին ծանուցել դիմորդին բացասական որոշման մասին: ՀՏՁՀ ԲՄՀ-ն դիմորդին անմիջապես կծանուցի՝ ներկայացնելով մանրամասն հիմնավորումներ բացասական պատասխանի/ որոշման պատճառների վերաբերյալ:

Բողոքի ուսումնասիրության բացասական արդյունքը ստանալուց հետո Դիմորդը ազատ է ընդունելու հետևյալ որոշումներից մեկը՝ ա) ընդունել ՀՏՁՀ-ի որոշումը, այնպես, ինչպես որ կա, և դադարեցնել բողոքը կամ բ) պահանջել հանդիպում Գործադիր տնօրենի հետ՝ իր հիմնավորումները ներկայացնելու համար, կամ գ) խնդրի վերաբերյալ դատական գործ բացել՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

Անհրաժեշտության դեպքում, ՀՏՁՀ-ի կողմից ստացված բողոքները կներկայացվեն և կխորհրդակցվեն ՏԿԵՆ-ի հետ: Շահագրգիռ կողմերը նաև հնարավորություն կունենան կապվել անմիջապես ՏԿԵՆ-ի հետ և հայտնել իրենց բողոքները, եթե նրանք չեն կարող կամ չեն ցանկանում դա անել ՀՏՁՀ-ի բողոքների/ արձագանքների համակարգողի միջոցով: ՏԿԵՆ-

ի ընդերքի վարչությունը պետք է ընդունի, գրանցի և անդրադառնա նախարարության մակարդակով ստացված բողոքներին:

Բողոքների գրանցամատյան: Կարևոր է, որ բոլոր բողոքները գրավոր կերպով արձանագրվեն և պահվեն տվյալների բազայում: Ստացված բողոքները պետք է համարակալվեն, ինչը թույլ կտա ՀՏՁ-ի կողմից նշանակված մասնագետին հետևել առաջընթացին տվյալների բազայի միջոցով: Տվյալների բազան պետք է առնվազն ներառի համապատասխան տեղեկատվություն ներկայացման ամսաթվի, խնդրի ոլորտի, պատասխանատու կողմի, հետադարձ կապի և խնդրի լուծման (դրական թե բացասական) վերջնաժամկետի մասին:

ՀԲ-ի Բողոքների արձագանքման ծառայություն: Շահագրգիռ կողմերը կարող են իրենց բողոքները ներկայացնել ծրագրի մակարդակով սեղծված բողոքների արձագանքման մեխանիզմներին կամ ՀԲ-ի Բողոքների արձագանքման ծառայությանը (ԲԱԾ): ԲԱԾ-ն ապահովում է, որ ստացված բողոքները անմիջապես ուսումնասիրվեն՝ ծրագրին առնչվող մտահոգություններին անդրադառնալու համար: ՀԲ-ի ԲԱԾ-ին բողոքներ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.worldbank.org/GRS>:

Դատարանի մակարդակ: Դիմորդները ազատ են ցանկացած պահի դատական գործ բացել (ՀՀ օրենսդրության համաձայն) ՀՏՁ-ի որոշման առնչությամբ: Դատական գործ բացել նշանակում է դադարեցնել բողոքի հետ կապված բոլոր գործողությունները Ծրագրի ԲԱԾ համակարգում: Գործը բացելուց հետո, Դիմորդի և ՀՏՁ-ի համար պարտադիր են դառնում միայն Դատարանի կողմից ընդունված որոշումները:

6. ՇԿՆՊ-ի մոնիտորինգ և հաշվետվողականություն

Սույն Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը պարբերաբար կուսումնասիրվի, կթարմացվի և կբարելավվի, որպեսզի այստեղ ներկայացված տեղեկատվությունը համահունչ լինի ամենավերջին տարբերակի հետ, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգրավման նույնականացված մեթոդները արդյունավետ և համապատասխան լինեն առկա իրավիճակին և համատեքստին: ՇԿՆՊ-ն կթարմացվի ծրագրին առնչվող գործողությունների և ժամանակացույցի էական փոփոխություններն (եթե կան այդպիսիք) արտացոլելու համար:

Սույն ՇԿՆՊ-ի շրջանակում իրականացված աշխատանքները ենթակա են մոնիտորինգի և գնահատման (ՄնԳ): Շահագրգիռ կողմերի ներգրավման բոլոր գործողությունները պետք է վերահսկվեն և փաստաթղթավորվեն, իսկ շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների առաջընթացը և արդյունքները արտացոլվեն դրամաշնորհային ծրագրի շրջանակում մշակվող առաջընթացի հաշվետվությունում: Շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների ներքին մոնիտորինգը կիրականացվի ՀՏՁ-ի ՄնԳ մասնագետի կողմից: Ծրագրի բողոքների արձագանքման մեխանիզմի միջոցով ստացված կարծիքները և բողոքները կփաստաթղթավորվեն և կներառվեն տարեկան հաշվետվություններում: Ամփոփագրերը և ներքին հաշվետվությունները (օր. ամսական,

եռամսյակային կամ տարեկան) կարտացույցն թարմացված/արդի տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի մասին հետևյալ կերպով՝

- Տեղեկատվություն շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների վերաբերյալ, այդ թվում խորհրդատվական հանդիպումների, կլոր-սեղան քննարկումների, ֆորումների և այլնի՝ նշելով մասնակիցների թիվը, տեղական, տարածաշրջանային և ազգային լրատվամիջոցներում հրատարակված/հեռարձակված մամուլի նյութերի քանակը և այլն:
- Տեղեկատվություն առցանց պորտալի գործունեության մասին, այդ թվում նաև տեղեկատվություն բացահայտված փաստաթղթերի, վեբկայքերի այցելությունների թվի, ստացված հետադարձ կապի քանակի և այլնի վերաբերյալ:
- ԲԱՄ-ին առնչվող տեղեկատվությունը, այդ թվում ստացված բողոքների և պահանջների բնույթը և քանակը, քննարկված բողոքների քանակը, բողոքի արձագանքման միջին ժամանակը և այլն:

Անհրաժեշտության դեպքում, կհավաքագրվի և կներկայացվի նաև տեղեկատվություն խոցելի խմբերի ներկայացուցիչների ներգրավման մասին, ինչպես նաև տարանջատված գենդերային տվյալներ:

7. ԾԿՆՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղեկավարության գործառույթները և պատասխանատվությունները

ՀՏԶ-ն ծրագիրը կիրականացվի ՏԿԵՆ-ի սերտ ներգրավմամբ: ՏԿԵ նախարարի տեղակալը Ընդերքի վարչության հետ միասին կհանդիսանա սույն ծրագրի իրականացման գործընթացի համակարգողը: Համաշխարհային բանկը համաձայնվել է ֆինանսավորում տրամադրել ԱՃԳԾԱ հավատարմագրային հիմնադրամի միջոցով: ՏԿԵՆ-ը ընդհանուր պատասխանատվություն կկրի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ԾԿՆՊ) թարմացման, ընդունման և իրականացման համար, այդ թվում ներգրավման տարբեր մեխանիզմների, դրանց նախնական ժամկետների, դերերի և պարտականությունների, ինչպես նաև ԾԿՆՊ գործողությունների իրականացման համար հատկացված ռեսուրսների համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶ) կհանդիսանա ծրագիրն իրականացնող մարմինը: ՀՏԶ-ն պատասխանատվություն կկրի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի շրջանակում հատուկ աշխատանքների իրականացման համար, ինչպես սահմանված է Աղյուսակ 2-ում: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն ունի Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի հետ աշխատելու մեծ փորձ, որոնք, ընդհանուր առմամբ, ներառել են նաև տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավման

գործողություններ: Հիմնադրամի հաստատությունների օժանդակության բաժինը (ՀՕ բաժին), որը բաղկացած է Համայնքների իրազեկման և խթանման, Ուսուցման և մասնագիտական օժանդակության, ինչպես նաև Սոցիալական և բնապահպանական խմբերից, ուղղակիորեն ներգրավված է Ծրագրի իրականացման գործընթացում:

ՀՏՁՀ-ն կվարձի Խորհրդատվական թիմ՝ շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների կազմակերպման և իրականացման գործընթացում, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակմանն առնչվող այլ աշխատանքներում աջակցելու համար: ՀՏՁՀ-ն կապահովի, որ խորհրդատվական թիմը բավարար և համապատասխան փորձ ունենա նախագծման, իրականացման, շահագրգիռ կողմերի խորհրդատվության գործընթացի փաստաթղթավորման, ինչպես նաև հստակ և հասանելի տեղեկատվական նյութերի պատրաստման, ՇԿՆՊ-ում նկարագրված բոլոր տեսակի իրադարձությունների կազմակերպման, խորհրդատվական գործընթացի արդյունքների արձանագրման և փաստաթղթավորման, շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների մանրամասն հաշվետվության մշակման գործընթացում, որոնք կկցվեն Քաղաքականության փաստաթղթին: Շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները կփաստաթղթավորվեն եռամսյակային առաջընթացի հաշվետվությունների միջոցով, որոնք կներկայացվեն Համաշխարհային բանկին:

Ռեսուրսներ

Սույն փաստաթղթում նկարագրված շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները Ծրագրի իրականացման առանցքային մաս են կազմում: Դրանք կներառվեն առանձին բյուջեի տողում՝ որպես խորհրդատվական ընկերության բյուջեի մաս: Նախնական գնահատումների համաձայն՝ Դրամաշնորհի բյուջեից մոտ 30.000\$ կհատկացվի շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների համար: Շահագրգիռ կողմերի ներգրավման շրջանակում ֆինանսավորվող գործողությունները կներառեն ֆոկուս խմբերի քննարկումների/քաղաքապետարանի հանդիպումների կազմակերպում (մոդերատորների փոխհատուցում, սրահների վարձույթ, տեղափոխում, սուրճի ընդմիջումներ, մասնակիցների խրախուսումներ և այլն), տպագիր նյութերի մշակում (տեղեկատվական թերթիկներ, քաղաքականության փաստաթղթի նախագծի տպում, որպեսզի այն թղթային տարբերակով հասանելի լինի առանցքային տեղերում և այլն), կլոր-սեղան քննարկումների կազմակերպում (սրահների վարձույթ, տեղափոխում, սուրճի ընդմիջում և այլն): Այս պահանջները պատշաճ ձևով կնշվեն Խորհրդատվական ընկերության SU-ում և կներառվեն Խորհրդատուի գնահատված բյուջեում:

ՏԿԵՆ-ի և ՀՏՁՀ-ի համակարգողներին կհանձնարարվի համակարգել և ապահովել Ծրագրին առնչվող գործողությունների օպերատիվ և արդյունավետ իրականացումը: ՏԿԵՆ-ում և ՀՏՁՀ-ում նշանակված անձնակազմը պատասխանատվություն կկրի սույն ՇԿՆՊ-ում նկարագրված գործողությունների իրականացման, մոնիտորինգի և հաշվետվողականության համար: Քանի որ ՏԿԵՆ-ի և ՀՏՁՀ-ի այս անձնակազմը վարձատրվում է պետական բյուջեից կամ այլ վարկային ծրագրից (ՀՏՁՀ-ի դեպքում) և շահագրգիռ կողմերի ներգրավման գործողություններն իրենց աշխատանքային պարտականությունների առանցքային մաս են

կազմում, վարձատրության լրացուցիչ տող չի հատկացվի սույն ՇԿՆՊ-ի շրջանակում շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների համակարգման համար:

Այս գործողությունների համար կպատրաստվի առավել հստակ տեղեկանք՝ որպես սույն ՇԿՆՊ-ի թարմացված տարբերակի մաս, որն ակնկալվում է ծրագրի հաստատումից հետո 30 օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում ՇԿՆՊ-ն շարունակաբար կթարմացվի ծրագրի իրականացման ընթացքում:

8. ՇԿՆՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ընդհանուր ռիսկերը

Շահագրգիռ կողմերի ներգրավումն էական նշանակություն ունի այս ծրագրի համար, և ելնելով ներկա իրավիճակից՝ կա միջին ռիսկայնություն:: Հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանի մարտահրավերային ոլորտներից մեկն է, և բոլոր հիմնական շահագրգիռ կողմերը միտված են, որ մշակվի Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն: Հետևաբար, գլխավոր շահագրգիռ կողմերի ճիշտ ներգրավումը և կառուցողական երկխոսության մթնոլորտի ստեղծումը խիստ կարևոր են Ծրագրի հաջողության համար:

ՇԿՆՊ իրականացման հետ առնչվող ընդհանուր ռիսկերը կարող են առաջանալ ոչ բավարար տեղեկատվության և ոչ բոլոր շահագրգիռ կողմերի, հատկապես խոցելի խմբերի չներգրավման, շահագրգիռ կողմերի խմբերի ոչ կառուցողական առաջարկների և/կամ քաղաքական դերակատարների կողմից ստացված արձագանքները ներառել չցանկանալու արդյունքում: Այդ ռիսկերը նվազեցնելու համար իրականացնող մարմինները (ՀՏՁՀ և ՏԿԵՆ) պետք է ձգտեն արագ ներգրավել և խորհրդակցություններ անցկացնել շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ, որպեսզի հնարավորություն ունենան տրամադրել նրանց ամբողջական տեղեկատվություն և ժամանակին պատշաճ արձագանքել նրանց մտահոգություններին ու զգուշավորությանը, իրականացնել համապատասխան միջոցառումներ խոցելի խմբերին հասնելու և նրանց արձագանքը հավաքագրելու համար, ստեղծելու մի հարթակ, որտեղ կբացահայտվի շահագրգիռ կողմերի կարծիքը և այնհաշվի առնվելու եղանակները:

ՀՏՁՀ և ՏԿԵՆ կարող են սերտորեն համագործակցել ԱՃԹՆ շահագրգիռ կողմերի խմբի հետ, որն արդեն ընդգրկում է հանրային, մասնավոր և քաղաքացիական հասարակության դերակատարների լայն շրջանակ և դրա վրա կառուցի իր շահագրգիռ կողմերի ներգրավման մեխանիզմը և հանքարդյունաբերության ոլորտի մասին երկխոսությունը: Սույն ՇԿՆՊ-ի շրջանակներում իրականացվող գործողությունները նպատակաուղղված կլինեն ստեղծելու կամ հաստատելու

շահագրգիռ կողմերի ներգրավման և երկխոսության երկարաժամկետ մեխանիզմ, որի միջոցով բոլոր ազդակիր խմբերին և հետաքրքրված կողմերին հնարավոր կլինի ներգրավել քաղաքականության իրականացման գործընթացում:

COVID-19 նկատառումները

ՇԿՆՊ-ի իրականացման հիմնական մոտեցումները և մեխանիզմները շատ կախված են երկրում COVID-19 իրավիճակից և սահմանված մեկուսացման ռեժիմից: COVID-19 համաճարակը երկրում սկսվեց 2020թ. մարտին և կտրուկ փոխեց իրավիճակը ստիպելով կիրառել սոցիալական հեռավորություն, մեկուսացում և խիստ սահմանափակումներ: Իրավիճակի զարգացմանը զուգահեռ, ՀՀ կառավարությունը միջոցներ ձեռնարկեց հանրայնացվածները, հանդիպումները, իսկ որոշ դեպքում՝ մարդկանց տեղաշարժը խիստ սահմանափակելու ուղղությամբ: Լայն հանրությունը նույնպես ավելի շատ սկսվեց մտահոգվել, մասնավորապես, սոցիալական շփումների միջոցով հիվանդության փոխանցման ռիսկով: Ներկայումս ՀՀ կառավարությունն աստիճանաբար բացում է տնտեսությունը, սակայն իրավիճակը շատ անկայուն և անկանխատեսելի է:

Հաշվի առնելով Ծրագրի նախնական ժամկետը, խորհրդակցությունները կանցկացվեն 2020թ. վերջում: Եթե հետագայում իրավիճակը պահանջի, խորհրդակցությունները կառավարելու և շահագրգիռ կողմերին ներգրավելու համար կարող են պահանջվել այլընտրանքային մեթոդներ՝ վիրուսի փոխանցումը կանխելու նպատակով սահմանված մեկուսացման ռեժիմին համապատասխան: Այս այլընտրանքային մոտեցումները, որոնք կկիրառվեն գործնականում շահագրգիռ կողմերին ներգրավելու համար, կարող են ներառել խորհրդակցություններ ավելի փոքր խմբերում, եթե թույլատրվեն ավելի փոքր հանդիպումներ, բացի այդ, ջանքեր կգործադրվեն առցանց ուղիներով հանդիպումներ իրականացնելու ուղղությամբ (օրինակ՝ webex, zoom, skype և այլն), կիրականացվի հաղորդակցության ձևերի դիվերսիֆիկացում՝ հույսը ավելի շատ դնելով սոցիալական լրատվամիջոցների, զրուցարանային խմբերի (chat groups), հատուկ առցանց հարթակների, հեռախոսային ծրագրերի վրա (օրինակ՝ ֆեյսբուք, թվիթեր, WhatsApp խմբեր, ինտերնետային լինկեր/կայքեր և այլն): Համապատասխանաբար, ՇԿՆՊ-ում թվարկած որոշ միջոցառումներ, որոնք ենթադրում են երես-առ-երես շփումներ (օրինակ՝ ֆոկուս խմբերի քննարկումներ, կլոր-սեղան քննարկումներ), կարող են փոխարինվել վիրտուալ հարթակներով՝ լայնորեն օգտագործելով S2S-ներ և ինտերնետային ռեսուրսներ:

ՇԿՆՊ փաստաթղթի բացահայտում և քննարկում

ՇԿՆՊ-ն կհրապարակվի և կտարածվի շահագրգիռ կողմերի խմբերի միջև և կքննարկվի երկրում: ՇԿՆՊ-ի մասին արձագանքները կներառվեն և կգրանցվեն

ՇԿՆՊ վերջնական տարբերակում: ՇԿՆՊ-ն կհրապարակվի և հասանելի կդարձվի հանրությանը Ծրագիր ողջ իրականացման ընթացքում: